

ՊԱՏԵՐԱԶՄԸ,  
ԱՊԱԳԱՅԻ  
ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԽԱՂԱՂ  
ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ



ՀՏԴ 316  
ԳՄԴ 60.5  
Պ 287

**Հետազոտության նախագծումը և իրականացումը՝**

Ծուշան Աբրահամյանի, Ագապի Իվանյանի, Մարիամ Խալաթյանի,  
Արփի Մանուսյանի, Նվարդ Մարգարյանի

**Հետազոտող հեղինակներ՝**

Ծուշան Աբրահամյան, Մարիամ Խալաթյան, Արփի Մանուսյան

**Համադրական վերլուծությունը և խմբագրումը՝**

Արփի Մանուսյանի

**Լուսանկարները՝**

Ագապի Իվանյանի

**Սրբագրումը՝**

Ազնիվ Նասյանի

**Շարվածքը և ձևավորումը՝**

Նորա Գալֆայանի

Պ 287 Պատերազմը, ապագայի անորոշությունը և խաղաղ համակեցությունը.-  
Եր.: «Սոցիոսկոպ» ՀԿ, 2022.- 128 էջ:

Հետազոտությունն իրականացվել է Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի, ինչպես նաև ԵՀՀ-Հայաստանի աջակցությամբ՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն, կարողությունների զարգացում և ճգնաժամի հասցեագրում» ծրագրի շրջանակում: Բովանդակության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Հետազոտության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի, Եվրոպական միության և ԵՀՀ-Հայաստանի տեսակետների հետ:

ՀՏԴ 316  
ԳՄԴ 60.5

© «Սոցիոսկոպ» ՀԿ, 2022  
ISBN 978-9939-1-1488-0

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4

5

10

22

35

59

62

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Խորապես շնորհակալ ենք բոլոր այն տեղահանված մարդկանց, որոնք համաձայնեցին մասնակցել հետազոտությանը՝ այդպիսով հնարավոր դարձնելով մեր նախաձեռնության իրագործումը:

Շնորհակալ ենք «Indie Peace Associates»-ի ներկայացուցիչներ Ջուլիեթ Շոֆիդին և Լարիսա Սոտիլային հետազոտության մեթոդաբանության և հարցաչարի վերաբերյալ կարևոր խորհուրդների համար: Այս բարդ և զգայուն թեման ուսումնասիրելու նրանց մասնագիտական մոտեցումներն էապես օգնել են մեզ՝ իբրև հետազոտողների:

Շնորհակալ ենք նաև Արմեն Օհանյանին և Էվիյա Դովհաննիսյանին նախնական վերլուծական տեքստն ընթերցելու և արժեքավոր դիտարկումներ անելու համար:

Շնորհակալ ենք Նորվեգիայի հելսինկյան կոմիտեին և ԵՀՀ-Դայաստանին ֆինանսական աջակցության համար:

# ՄԵԹՐՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը բացահայտում է Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքով տեղահանված մարդկանց՝ պատերազմի և խաղաղության, տարածաշրջանում խաղաղ համակեցության, իրենց և Ղարաբաղի<sup>1</sup> ապագայի ըմբռնումները:

Հետազոտությունը փորձ է հասկանալու.

**1. Պատերազմի և օցիալ-տնտեսական համատեքստի փոխառնչությունները:**

**2. Պատերազմի պատճառների և պատերազմի սպասման հետահայաց մտածումները:**

**3. Ապագայի և տարածաշրջանում խաղաղ համակեցության հնարավորության ընկալումները:**

Հետազոտական հարցերը դիտելով իբրև ուղեկիշներ՝ 70 խորին հարցազրույց ենք իրականացրել Հադրութի, Շուշիի, Քելբաջարի և Լաչինի շրջանների բնակիչների հետ, որոնք պատերազմի հետևանքով տեղահանվել և բնակություն են հաստատել Հայաստանի երեք մարզերում (Կոտայքի, Արարատի, Սյունիքի) և Երևան

---

**1.** Տեղանունները ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում քաղաքական վեճի առարկա են (Սոտիև, 2021): Ավելին սրված պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում պետությունները և հասարակության առավել ազգայնական շերտեր էլ ավելի են քաղաքականացնում տեղանվան ընտրությունը՝ այն երբեմն դարձնելով հանրային պարսավանքի, բարոյական ճնշման և ոչ բավարար հայրենասիրության համար մեղադրանքի հերթական գործիք: Եթե կոնֆլիկտից առաջ Ղարաբաղի որոշ բնակավայրեր հայտնի էին իրենց թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական անվանաձևերով (ինչպես, օրինակ՝ Քարինտակ/Դաշալտի գյուղը (Broers, 2019)), ապա առաջին պատերազմից հետո հակամարտող կողմերը մշակել և մեղիայի միջոցով հանրային դիսկուրսի դաշտ են նետել տեղագրության փոխբացառող անվանումներ:

Ինչպես մեր նախորդ՝ «*Հետահայաց. ծայրեր պատերազմի և խաղաղության մասին*» հետազոտության մեջ, այնպես էլ այստեղ մենք օգտագործում ենք Ղարաբաղ ձևը: Մեր հետազոտություններից և դիտարկումներից ստացած տպավորության համաձայն՝ այն հանրության շրջանում առավել տարածված ձևն է, թեև վերջին տարիներին և հատկապես 2020 թ. պատերազմից հետո լայն տարածում է ստացել Արցախը: Միաժամանակ նախընտրել ենք Քելբաջար և Լաչին տեղանվանումները, թեև գործածության մեջ են դրված նաև Շահումյան և Քաջաթաղ ձևերը: Այդուհանդերձ, հարցազրույցներից ուղիղ մեջբերումներ անելիս հավատարիմ ենք մնացել տեղանունների՝ մարդկանց ձևակերպումներին (*խմբ.՝ Արփի Մանուսյան*):

քաղաքում: Հարցագրույցներն իրականացրել ենք 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

## ԱՂՅՈՒՍԱԿ 1. Ընտրանք<sup>2</sup>

	Հադրութ		Շուշի		Քելբաջար		Լաչին		Ընդհանուր	
	Ար	Իգ	Ար	Իգ	Ար	Իգ	Ար	Իգ	Ար	Իգ
<b>Արարատ</b>										
14-18									0	0
19-35	1	1					1		1	2
36-50	1						1	1	2	1
51 և բարձր	1		1	1	1	1	2		4	2
<b>Երևան</b>										
14-18	1	2							1	2
19-35	2	2	1	1		1	2	1	5	5
36-50	3	3	2	1			1	1	6	5
51 և բարձր	2	2	1	1	1	1			4	4
<b>Սյունիք</b>										
14-18							2		2	0
19-35		1					2	2	2	3
36-50	1						1	2	2	2
51 և բարձր							1	2	1	2
<b>Կոտայք</b>										
14-18						1			0	1
19-35	1	1	1	1				1	2	3
36-50		1			1	1	1		2	2
51 և բարձր	1							1	1	1
<b>Ընդամենը</b>	<b>14</b>	<b>13</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>3</b>	<b>5</b>	<b>13</b>	<b>12</b>	<b>35</b>	<b>35</b>

**2.** Հետազոտության ընտրանքն ինչպես մարզերի, այնպես էլ սեռատարիքային բաշխվածության չափանիշներով հիմնված է համապատասխան պետական գերատեսչություններից ստացած վիճակագրական տվյալների վրա:

Պատերազմի օրերին ՀՀ էր տեղափոխվել 98000 դարաբաղցի, որոնցից շուրջ 38000-ը տեղահանվածներ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ Ղարաբաղում բնակվում է 117455-ից ավելի մարդ: Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում շարունակում են բնակվել 20000-ից ավելի տեղահանվածներ: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների գեկույց:

Թեև այս վերլուծությունը չի տեսականացնում մարդկանց պատկերացումները, սակայն ձգտում է տեղայնացնելու և շրջանակելու դրանք առավել լայն սոցիալ-քաղաքական համատեքստերում:

Այս տեսանկյունից մենք մեր աշխատանքը տեղորոշում ենք հանրային սոցիոլոգիայի շրջանակում՝ ըմբռնելով վերջինս իբրև կարևորագույն հասարակական խնդիրները ձևակերպելու, ուսումնասիրելու և հանրությանը դրանց հաղորդակից դարձնելու ուղղություն, որ ընդարձակում է սոցիոլոգիայի գիտակարգային սահմանները և խթանում այդ խնդիրների շուրջ հանրային բանավեճը:

Պատերազմների, սոցիալական անարդարությունների, իշխանության և խոշոր կապիտալի ներքո ստորադասված հանրային շահի շուրջ և դրա տեսանկյունից արվող հասարակագիտական ուսումնասիրություններն այսօր անհրաժեշտություն են, իսկ հանրային սոցիոլոգիան հնարավորություն է՝ ձևակերպելու, մտածելու և քննարկման առարկա դարձնելու զգայուն և բարդ սոցիալ-քաղաքական հարցերը:

Չետագոտության մտահոլացումը, նախագծումը, հասկացությունների և հարցերի ձևակերպումը, ինչպես նաև տվյալների մեկնաբանումը անխուսափելիորեն ազդվել են մեր հետազոտական, ինչպես նաև քաղաքական-գաղափարական հայացքներից և մոտեցումներից: Իբրև հետազոտողներ՝ մենք գիտակցում ենք, որ թեև մեր ձևակերպած հարցերն ունեն հանրային-քաղաքական հրատապություն և կարևորություն, սակայն նախ և առաջ բխում են մեր հետազոտական հետաքրքրություններից: Սա լրացուցիչ ինքնանդրադարձի ջանք և լայնախոհություն է պահանջել խորամուխ լինելու մարդկանց փորձի և դիրքորոշումների մեջ՝ դրանք պատշաճորեն բացահայտելու համար: Ավելին՝ հետազոտական հարցերի շուրջ մարդկանց դիրքորոշումները և պատկերացումները կարող են ազդվել ինչպես կոնկրետ ժամանակահատվածից, այնպես էլ երկրում, տարածաշրջանում և ավելի լայն աշխարհաքաղաքական համատեքստում տեղի ունեցող փոխակերպումներից և ճգնաժամերից: Այս առումով Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժման,

կայսերապաշտական քաղաքականությունների և դիսկուրսի ընդարձակման, ռազմականացման աճի և լիբերալ աշխարհակարգի ճգնաժամի, ինչպես նաև տարածաշրջանի անկայունությունների հետևախորքին հետազոտական մեծ մարտահրավեր է արագընթաց զարգացումները և փոխակերպումները ներառող ընդգրկուն վերլուծություններ անելը:

Այս ուսումնասիրությունը 2021 թ. հրատարակված «Յետահայաց ծայրեր պատերազմի և խաղաղության մասին»<sup>3</sup> հետազոտական աշխատանքի տրամաբանական շարունակությունն է:

Հաշվի առնելով տեղահանված մարդկանց՝ հետազոտական թեմայի հանդեպ զգայունությունը և պատերազմի տրավման, բոլոր հարցազրույցների և տեսանկարահանումների իրականացման համար ստացել ենք հետազոտության մասնակիցների գրավոր համաձայնությունը:

Հարցազրույցներից մեջբերումներ անելիս ձգտել ենք հնարավորինս զերծ մնալու լեզվական միջամտություններից և խմբագրումից:

Հետազոտությունը բաղկացած է 3 բաժնից և ամփոփումից.

| Պատերազմի սոցիալական երեսը

| [Ան]սպասելի պատերազմը

| Ապագայի և խաղաղ համակեցության ֆրագմենտար ընկալումները

| Ամփոփում

---

**3.** Հետազոտությունն իրականացվել է 2018-2019 թվականներին Հայաստանի սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքներում, ինչպես նաև Ղարաբաղում և երևան է բերում պատերազմի, խաղաղության և մարդու իրավունքների փոխառնչության և ընկալման հարցերը նախապատերազմական համատեքստում:





# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՍԸ

2016 թվականի ապրիլյան սրացումը հատկապես ակնառու դարձրեց պատերազմի և սոցիալական անարդարության, սոցիալական անապահովության և աղքատության միջև կապն ինչպես Դայաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Ինչպես ցույց է տալիս ԴՔԱՎ-ի ուսումնասիրությունը, 2016 թվականի բախումների ժամանակ հայկական կողմից 61 գոհված զինծառայողի ընտանիքներից միայն 17-ն ուներ մշտական ֆինանսական եկամուտ՝ 1 աշխատողի աշխատավարձի հիման վրա: 12-ը՝ բյուջետային հիմնարկում, 5-ը՝ մասնավոր ոլորտում, որը սակայն բավարար չէ ընտանիքի ֆինանսական կարիքները հոգալու համար: 14 ընտանիք ընդհանրապես աշխատանք չունեն, այդ թվում 6 ընտանիքի ֆինանսական միջոցներ էին ծերության կամ հաշմանդամության թոշակը, մեկինը՝ ընտանեկան նպաստը: Մնացած 30 ընտանիքները գոյատևում էին արտագնա և ոչ մշտական աշխատանքների շնորհիվ<sup>4</sup>:

---

4. Սադիկյան, Ա. (2016). 2016 թ. ապրիլին պատերազմական գործողությունների ընթացքում մահացած զինծառայողների մահվան հանգամանքների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության վիճակի մասին. ԴՔԱՎ. վերցվել է [shorturl.at/npMU0](http://shorturl.at/npMU0):

«Չայաստանում նրանց ասում են հերոսներ, Ադրբեջանում՝ նահատակներ: Մեկն ասարում էր քարե տան մեջ՝ հողից հատակով և առանց տանիքի, մյուսը՝ կեղտոտ հատակով և բրեզենտե տանիքով ցեխից տնակում»<sup>5</sup>. 2016 թվականի սրացման հետևանքով Չայաստանի և Ադրբեջանի զոհված զինվորների մեծ մասն ուներ ընդհանուր բնութագիր. նրանք սոցիալապես անապահով ընտանիքներից էին: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանում բողոքի ցույցեր սկսվեցին. պատերազմի մասնակիցները հարցնում էին իշխանություններին՝ ինչո՞ւ են բանակում ծառայում անապահով խավի ընտանիքների տղաները, իսկ հարուստների զավակներն այս կամ այն կերպ խուսափում են ծառայությունից:

Վերջին պատերազմում Ղուբաթլուի շրջանում վիրավորված 24-ամյա Աղարազիմ Իսմայիլովը պատմում է «Ազատություն» ռադիոկայանին, որ պատերազմ եկածների մեծ մասն անապահով ընտանիքներից էր. «Ինչո՞ւ ենք մենք վիրավորվել, իսկ նրանցից ոչ ոք կռիվ չէր գնացել: Մենք ենք տուժել, զոհեր ու վետերաններ տվել, այդ շարքերում նրանցից ոչ մեկը չկա: Հարց է ծագում՝ ինչո՞ւ նրանք պատերազմ չեն գնացել, ինչո՞ւ ենք մենք գնացել»<sup>6</sup>:

Սակայն բավարար չէ ասել, որ պատերազմներին մասնակցում են հիմնականում հասարակության անապահով շերտերը. պատերազմները նաև աղքատացնող են: Պատերազմներն աղքատացնում են նախ և առաջ պատերազմական գոտու բնակիչներին, հանրային խոցելի և անպաշտպան խմբերին և հասարակությանն ընդհանուր առմամբ: Ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ տեսանկյունից պատերազմի հետևանքով ասարուստը և կացարանը կորցրած մարդիկ հայտնվում են պետությունից, այլևայլ բարեգործություններից, ձեռներեցներից սոցիալ-տնտեսական [վերարտադրող] կախյալության մեջ:

5. Grigoryan, M., Alibayli, V. (2016, May 11). *The Poor are the First to Fight in Nagorno Karabakh*. Retrieved from <https://eurasianet.org/poor-are-first-fight-nagorno-karabakh>.

6. Սարգսյան, Տ. (2022, հունվար 18). *44-օրյա պատերազմին մասնակցած և վիրավորում ստացած ադրբեջանցի զինվորները բողոքում են սոցիալական անարդարությունից*. վերցվել է <https://www.azatutyun.am/a/31660121.html>:

«...Մենք սովոր ենք աղքատությունը համարել շատ նյութական մի բան, և նույնիսկ խոսակցություններն այն մասին, որ աղքատությունը բազմաչափ երևույթ է, ավարտվում են ծառայությունների հասանելիության մասին զրույցներով՝ լինի դա կրթական, առողջապահական, թե այլ ծառայություն: Ոչ պակաս կարևոր է մարդու խոցելիությունը հնարավոր ռիսկերի հանդեպ և անպաշտպանվածությունը այդ ռիսկերից, և այդ իմաստով պատերազմը մեզ բոլորիս դարձնում է աղքատ, ոչ խաղաղ իրավիճակը մեր հասարակությունը դնում է խոցելիության մի շերտի վրա, որը կամայականորեն յուրաքանչյուրիս վտանգված է դարձնում...»<sup>7</sup>:

Անհավասարություններն աճում են և առավել տեսանելի դառնում բռնի կոնֆլիկտներին և պատերազմներին հաջորդող մի քանի տարիների ընթացքում: Պատերազմից ազդված ռեգիոններում և երկրներում գյուղատնտեսությամբ զբաղվող մարդիկ սովորաբար կորցնում են հողին հասանելիությունը և զրկվում շուկայից: Պատերազմի տնտեսությունը և պատերազմի ձեռներեցները օգտագործում են թուլացած անվտանգային միջավայրը՝ վերահսկողություն հաստատելով փոփոխված շուկայի վրա՝ այդ կերպ կապիտալացնելով պատերազմը և դրա հետևանքները: Միաժամանակ պատերազմից տուժած բազմաթիվ համայնքներ հայտնվում են աղքատության մեջ՝ կորցնելով կապերը շուկայի և տնտեսության հետ, իսկ պատերազմական գոտու և դրան հարակից բնակավայրերը ենթակա են կողոպուտի և թալանի: Սակայն պատերազմի՝ մարդկանց արժանապատվությունը նսեմացնող, սոցիալական անարդարությունները, անհավասարությունը և աղքատությունը խորացնող երեսի մասին հազվադեպ ենք խոսում:

«...Երբ գնացել ենք ապրելու, թալանը շարունակվում էր, գնացքի ռելսերը կտրում-տանում, վաճառում էին, քարեր էր, որ բարձում էին, շենքերը քանդում, քարերը ուղարկում էին վաճառելու, ար-

7. Անդրեասյան, Ժ. (2019, հունիս 28). Պատերազմ և աղքատություն. հատված 1. վերցվել է <https://www.youtube.com/watch?v=IsmnUv6i72s>:

մատուրաները քանդում էին՝ վաճառելու, ջրագծերը քանդում էին՝ վաճառելու, մենակ ամեն մեկը մտածում էր՝ ոնց ինքը պիտի հարստանա»։ **35-50 տ. տեղահանված տղամարդ**

Ավելին՝ պատերազմները և հետպատերազմական դրվագները բնութագրվում են այնպիսի տնային տնտեսությունների աճով, որոնք գլխավորում են տարեցները և կանայք (Goodhand, 2001):

Առկախված և իրական պատերազմների մեջ ապրող հասարակություններում [բազմաչափ] աղքատության Նշանակալի, բայց անտեսված բաղկացուցիչներից է նաև մարդկանց՝ սեփական ծայնի անկարևորության զգացումը, որ քաղաքացին չի կարող ազդել հասարակական և քաղաքական գործընթացների վրա, որոնք ուղիղ և անմիջական ազդեցություն ունեն իր կյանքի վրա<sup>8</sup>:

Անզորության զգացումը ուղղակիորեն կապվում է քաղաքականությունից օտարման հետ: Սոցիալապես անապահով պայմաններում ապրող և «օրվա հացի» մասին մտածող տեղահանվածները հաճախ ունեն սեփական ծայնի անկարևորության զգացում, ինչպես նաև այս կամ այն քաղաքական հարցի շուրջ դատողություններ անելը համարում են իրենց կարողություններից կամ ուժերից վեր մի բան, որ հասու է միայն քաղաքագետներին, քաղաքական գործիչներին, իշխանություններին, գերտերությունների ներկայացուցիչներին և այլն: Պատերազմը խորացրել է սեփական «փոքրության» մասին մարդկանց պատկերացումները: Սրված անզորության, անկարողության, երբեմն նաև չսված լինելու ապրումներն արտահայտվում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական և [աշխարհա]քաղաքական մակարդակներում: Ոչ միայն քաղաքացիներն են ըմբռնվում իբրև քաղաքականապես անզոր, այլև հակամարտության լուծման համատեքստում գրեթե չեն շոշափվում Հայաստանի՝ իբրև քաղաքական գործորդի դերն ու անելիքը: Սոցիալ-տնտեսական վատթար դրության պատճառով է

**8.** epress.am. (2019, նոյեմբեր 25). *Իրավունքը, աղքատությունը, ամոթը և աղմուկը*. վերցվել է <https://www.youtube.com/watch?v=-H11QdMpxGs>:

Նաև, որ տեղահանված մարդիկ աղոտ պատկերացումներ ունեն իրենց հետագա անելիքների, կյանքի կազմակերպման եղանակներ վերագտնելու առնչությամբ:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական օրակարգերի վերաբերյալ մտորումները հանգեցնում են այն համոզմանը, որ հակամարտության լուծումը կախված չէ ոչ միայն Չայաստանից, այլև Ադրբեջանից, ենթակա է հեգեմոն աշխարհաքաղաքական շահերին:

# ՄԵԳՆԻՑ ՈԳԻՆԳ ԿԱԽՎԱԾ ԶԷ

«Այսօր Ղարաբաղի հարցի լուծումը միայն Պուտինի, Ամերիկայի ու Ֆրանսիայի ձեռքում է: Իրենք կարող են լուծել, բայց իրենք էլ չեն անում դա»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Ես շատ փոքր մարդ եմ, որ ասեմ՝ վերջնական ինչ պիտի լինի: Չեմ կարող ասել: Դա քաղաքագետները պիտի որոշեն: Մենք ի՞նչ որոշենք»: **51-75 տ. տեղահանված կին**

«...Մենք որ մտնում ենք մի աշխատանքի, մեզնից մեծեր ունենք, իրենք իրենցից մեծեր ունեն, որ արդեն գիտեն ում դիմեն, որ էդ սահմանները պահպանվեն, որ հաշտության պայմանագիրը լինի, մենք էլ զգանք՝ ապահով երկրում ենք ապրում»: **19-35 տ. տեղահանված կին**

«Մեզնից կախված ոչ մի բան չկար էդ պահին»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Մենք ի՞նչ: Մենք ռամիկ մարդիկ ենք՝ հողագործ, մեր գործերն էինք անում, ո՞վ էր մտածում, թե նորից Ադրբեջանը կռիվ կսկսի»: **51-75 տ. տեղահանված տղամարդ**

«Ժողովրդի ձեռքում ի՞նչ կա: Ժողովուրդը ոչխարի նման բան է, ոնց քշում են, այնպես էլ գնում է: Դա արդեն մեծերը պետք է իրար հետ լեզու գտնեն, որ լավ լինի վիճակը: Իրենք որ չանեն, մեր ձեռքն ի՞նչ կա: Իմ ձեռքը ի՞նչ կա, կամ քո ձեռքն ի՞նչ կա՞ ոչ մի բան»: **51-75 տ. տեղահանված տղամարդ**

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքով տեղահանվածների մեծ մասը հայտնվել է սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Նրանց գերակշռ մասը կորցրել է իր տնային տնտեսությունը, աշխատանքը, բիզնեսը: Նրանք բնակվում են վարձակալությամբ, հարազատի տանը, որևէ բարերարի կամ պետության տրամադրած կացարանում: Տեղահանված մարդկանց ամենամեծ կարիքը տունն է: Տան և մշտական աշխատանքի բացակայության պայմաններում մարդիկ համարում են, որ ոչ թե ապրում են, այլ գոյատևում:

Թեև ընդունված է համարել, որ աղքատության մասին խոսելը «ամոթ» է, մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ պատերազմի հետևանքով աղքատության և անորոշության մեջ հայտնված մարդիկ բացահայտորեն խոսում են իրենց իրական սոցիալական դրության մասին: Եթե տեղահանված մարդկանց մի մասը պետությունից ակնկալում է միայն տան փոխհատուցում, ապա առավել խոցելիներն ակնկալում են նաև սոցիալական աջակցության շարունակականություն, ինչը, սակայն, էլ ավելի է խորացնում և շարունակական դարձնում նրանց կախյալությունը այլևայլ աջակցության ծրագրերից:



# ԻՆԶՊԵՍ

## «ՅՈՒԼԱ ԳՆԱԿԼ»

«Հիմա մենք մի վիճակում ենք գտնվում, որ չենք իմանում՝ տեղափոխված ենք, տեղահանված ենք, փախստական ենք, թե գաղթական»: **51-75 տ. տեղահանված տղամարդ**

«Ո՞րն ասեմ... Ես ոչ մեկին չեմ հավատում, ես ինձ էլ չեմ հավատում՝ գոյություն ունե՞մ, թե՞ չէ»: **35-50 տ. տեղահանված տղամարդ**

«Գոնե զգուշացնեիս, մենք էլ Լաչինի նման կհանեիք մեր ունեցվածքը: Գոնե կկարողանայիք դրանով յուրա գնալ: Հիմա ամեն ինչ առնելու ա, հիմա ինչ տեսնում եք էս տանը, ուրիշինն ա: Ես ոչ մի բան, ընդհանրապե՛ս ոչ մի բան [չունեմ]: Ափսեից սկսած ամենակարևոր բաներով վերջացրած՝ առնովի ա»:  
**19-35 տ. տեղահանված կին**

«Ասում են՝ արտասահմանից էսքան օգնություն ա եկել: Մեզ ի՞նչ են տվել, օրինակ, էսքան ժամանակ: Հա, մարդ կա ասում ա՛ ինձ գումար են տվել, բայց ինչի՞ ոչ հավասար: Ինչի՞ ես ոչ մի բան չեմ ստացել, էն մեկը ամեն ինչից օգտվել ա: Ինչի՞ հավասար չեն բաժանել»: **19-35 տ. տեղահանված կին**

«Երեխաների հետ ենք այս բնակարանում, մեր ծանոթի բնակարանն է, գումար չենք տալիս: Տանը ոչ ոք հիմնական աշխատանք չունի, բախտներս բերեց, գոնե փեսաս ժամա-

նակավոր աշխատանք ունի, ինքն էլ ամեն ինչ կորցրել է  
Քաջաթաղում»: **36-50 տ. տեղահանված կին**

«Զրոյի վրա գնացել էինք: Երկրի վիճակն էլ այն չէր: Գնացել ենք, աշխատել ենք չարչարանքով (այն ժամանակ երեխաները փոքր էին, տղեն՝ փոքրը, առաջին դասարան էր, աղջիկս՝ հինգերորդ): Դե սկզբից այնտեղ էլ վիճակը լավ չէր, գնալով ամեն տարի առավելություններ եղան: Գնացել ենք, մեր գյուղում՝ Քաջաթաղում, լույս չի եղել: Գազելներ չկային, չէին աշխատում, մարդիկ Լաչին գնում էին ուտքով: Փառք աստծո, վերջին տարիներին գազելները, լույսը, ամեն ինչը կար, շատ լավ էր: Աշխատեցինք, տուն-տեղ դրեցինք... Դե հետո կոփվը: Դետո ես էլ արդեն հիվանդացա (երկու տարի է՝ չեմ տեսնում), երեխաներն արդեն մեծացել էին, իրենց աշխատանքով, չարչարանքով սարքեցին, տվինք թուրքին, եկանք»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Մենք էստեղ [Յայաստանում] տուն չենք ունեցել, գնացել ենք, ապրել ենք էստեղ: Էստեղ 21 տարի ապրել ենք, տուն ենք ստեղծել՝ ամեն ինչով, ամեն ինչով: Դիմա էկել ենք՝ մի օր քոռչս տունը, մի ամիս էստեղ, մի ամիս էստեղ: Ինչքան կարանք»: **51-75 տ. տեղահանված կին**

Դետագոտությունը երևան է բերում նաև այն տարբերությունները, որոնք առկա են Զադրութի և Շուշիի շրջաններից տեղահանվածների և Քելբաջարի ու Լաչինի շրջաններից տեղահանվածների միջև: Եթե Զադրութի և Շուշիի արդեն նախկին բնակիչները հիմնականում առավել ապահով սոցիալ-տնտեսական միջավայր և սոցիալական կապիտալ են ունեցել Ղարաբաղում, ապա Յայաստանի այլ մարզերից Քելբաջարի և Լաչինի շրջաններ տեղափոխվածներն ի սկզբանե սոցիալապես անապահով հանրային շերտերի ներկայացուցիչներ են: Ինքնակամ կամ հայաստանյան և ղարաբաղյան իշխանությունների կողմից վերաբնակեցման առաջարկով և պետական

աջակցության խրախուսանքով այնտեղ մեկնածները տարիների ջանք և եռանդ են ներդրել Ղարաբաղում կյանք կառուցելու համար: Պատերազմի հետևանքով նրանք կորցրել են ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում ապահով կյանք ունենալու հեռանկարը: Միաժամանակ, մարդկանց շրջանում քիչ ինքնանդրադարձ և մտորում կա այն հարցի շուրջ, որ Քելբաջարի և Լաչինի շրջաններից Ղարաբաղյան առաջին պատերազմի հետևանքով տեղահանված և իրենց ունեցվածքը կորցրած ադրբեջանցիները ևս համանման կորստի և ցավի միջով են անցել:

Որքան էլ պարադոքսային է թվում, սեփական կորստի անարդարության զգացումը չի ընդլայնում ադրբեջանցիների կորստին ապրումակցելու հնարավորությունները Նույնիսկ այն պարագայում, երբ առկա են իննստուսականների կեսին դեռևս կանգուն մնացած ադրբեջանական տների մասին մարդկանց վերհուշերը: Սրացումներով և պատերազմներով ընթացող Ղարաբաղյան կոնֆլիկտն այս տարիների ընթացքում խզել է կոնֆլիկտող հասարակությունների միջև կապը և խորացրել փոխադարձ թշնամանքը: Այս տարիների ընթացքում Հայաստանում, Ղարաբաղում և Ադրբեջանում մշակվել և արտադրվել են կոնֆլիկտի տարամետ պատմությունները և հիշողություններ: Սիմվոլիկ և ոչ սիմվոլիկ իմաստներով «հողի» և «տան» նկատմամբ սեփականատիրության քաղաքականությունները ձևախեղել են հարևանության և ընդհանուր տարածքի մասին մարդկանց հիշողությունները: Այդուհանդերձ, մարդկանց շրջանում կա խորքային ըմբռնում, որ գրավյալ հողերը (հետաքրքրական է, որ այդպիսիք են ընկալվում առավելապես Ֆիզուլին, Ադդամը և Ջաբրայիլը, որոնք, ըստ էության, վերաբնակեցված չէին, չկար հողի հետ կապվածությունը) «հասարակ ժողովրդին» չեն պատկանել: Գրավյալ հողերի հաշվին հարուստ խավի է՛լ ավելի հարստացման մասին դատողությունները երևան են հանում սոցիալ-տնտեսական այն մեծ անջրպետը, որ առկա է Ղարաբաղյան պատերազմներից տուժած «հասարակ ժողովրդի» և պատերազմը կապիտալիզացրած Ղարաբաղյան և հայաստանյան իշխանությունների, օլիգարխների, գործարարների միջև:

# Ո՞ՒՄՆ ԷՒՆ «ՀՈՂԵՐԸ»

«Օրինակ, մարդ կա՝ հիմա ասում է՝ ժամանակին տայինք, էլի: Չգիտեմ, չեմ կարող ասել՝ ո՞նց կլիներ իմ կարծիքը, բայց այդ հողերից ո՞վ էր օգտվում տարիներով, հասարակ աջխատող մարդիկ օգտվում էին: Չէ՛, իհարկե չէ՛, օգտվում էին մի քանի հոգի: Չազարավոր հեկտարներով հողեր էին, մի քանի հոգի էին օգտագործում»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Նե՛նց չի, որ Ֆիզուլիում մարդ է ապրել, Ֆիզուլիում ապրել են միայն հարուստները, ով կարողացել, հեկտարներով հող է վերցրել, իր բիզնեսի համար հացահատիկներ է ցանել կամ չգիտեմ ինչ է արել: Այնպես չի, որ ժողովուրդն այդ հողից օգտվել է, այդ հողում մարդ չի ապրել»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Ես վստահ էի, որ մի օր պատերազմը սկսվելու է: Որովհետև Ֆիզուլին, Աղդամը մերը չէին: 30 տարի մենք թալանել, թալանել, թալանել ենք: Մինչև հիմա այնտեղից էին հող, քար բերում՝ տուն կառուցելու համար: Պարզ էր, որ մի օր իրենք իրենց հողերը հետ են բերելու: Բայց նույն զգացողությունն էլ իմ մոտ է: Չադրութը միակ հողն է, որտեղ հենց բուն քաղաքում չկար թուրքական գերեզմանոց: Ո՞նց իրենք իրենցը վերցրին, նե՛նց էլ երևի մենք, թեկուզ 30 տարուց կվերցնենք»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«Տարան այնտեղ, ասացին՝ բնակիչ է պետք: Եթե ծախված էին այդ հողերը, ինչո՞ւ մեր ժողովրդին տարար: Չայաստանի 90 տոկոսն այնտեղ տուն էր դրել, տեղ էր դրել: Այսօր ասում են՝ Ասկերանում տուն ենք սարքում, եկե՛ք, ապրե՛ք: Ի՞նչ հույսի վրա ես գնամ այնտեղ ապրեմ, ո՞ւմ հույսով. Ասկերան թուրքը մտնում ելնում է»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**



# ԼԱՆՍՊԱՍԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմը միաժամանակ և՛ սպասված էր, և՛ անսպասելի: Առկախված պատերազմի մասին ներքին զրույցները, որ ձևակերպվում էին «պատերազմը մի օր լինելու է» դատողության շրջանակում, և մյուս կողմից՝ մասշտաբային պատերազմի հավանականությանը չհավատալու և չպատկերացնելու, թվում է, իրար հակադիր մտայնությունները տարիներ շարունակ ապրել են կողք կողքի: Թեև տեղահանված մարդիկ առկախված պատերազմն ընկալում էին իբրև հավանական, բայց հետահայաց անդրադառնալով սեփական դիրքորոշումներին՝ այնուամենայն էլ, որ չէին ակնկալում լայնածավալ, երկարատև և պարտության ելքով պատերազմ: Լայն իմաստով՝ պատերազմի հավանականությունը մտածվում էր, բայց վերացական հաղթանակի տեսանկյունից:

Պատերազմի միաժամանակ իրական և անհավանական լինելը, ի թիվս այլ պատճառների, մեծապես կապված է տարիներ շարունակ հանրային-քաղաքական դաշտից ղարաբաղյան կոնֆլիկտի և դրա հնարավոր լուծումների շուրջ բովանդակային քննարկումների և հանրային երկխոսության բացակայության, մեդիայի՝ «հաղթանակած» պետության գերիշխող նարատիվի հողավորման և քննադատական, տիրապետող դիսկուրսները հարցադրող մտքի լուսանցքայնացման, իսկ մյուս կողմից՝ Ղարաբաղում տիրապետող պատերազմական առօրեականության հետ:

Թեև լայն իմաստով չկային հնարավոր պատերազմի, դրա սոցիալ-տնտեսական և [աշխարհա]քաղաքական ազդեցությունների շուրջ էական հանրային քննարկումներ, սակայն գործնակա-

նում Ղարաբաղում ապրող մարդկանց կյանքը հարմարեցված էր առկախված և ակնկալվող պատերազմի դրությանը: Ավելին հանրային դաշտից արտամղված, բայց միջանձնային զրույցներում և գործնական կյանքում առկա պատերազմի սպասումը լցված էր դրա՝ բռնության ուժի, պարտության, հետևանքների մասին մտածումներով: «Չաղթանակած» պետության գերիշխող գաղափարաբանության ներքո պատերազմի սպասումը դեռևս էր նշանակում պատերազմի պարտության սպասում:

«...Միշտ էլ թշնամու թիրախի տակ ենք եղել, միշտ էլ սպասել ենք, որ պատերազմ կարող է լինել: Բայց որ այսպիսի պատերազմ ու այսպիսի կորուստներով... Այն դեպքում, որ այդքան զոհ տանք ու կորցնենք նաև հողատարածքները, ոչ մեկ չէր սպասում»: **19-35 տ. տեղահանված կին**

«Մենք բոլորս էլ սպասում էինք պատերազմին, որ մի օր պտի լինի: Բայց որ պտի կռվենք, ոչ թե հող տանք: Մենք սպասում էինք պատերազմին, գիտեինք, որ թուրքը չի համակերպվելու դրա հետ: ...Բայց չէինք սպասում, որ կարող է ստորագրեն ու դուրս գանք»: **51-75 տ. տեղահանված տղամարդ**

«Մենք բոլորս սպասում էինք այս պատերազմին, ուղղակի չէինք պատկերացնում, որ այսպես կսկսվի: Չաղրություն մեծերը միշտ ասում էին, որ միևնույն է, պատերազմ լինելու է, ուղղակի էսքան շուտ ու ուժեղ... Չա, մենք պատկերացնում էինք, որ պատերազմ կլինի, ինչ-որ չափով տարածքների կորուստներ կլինեն: Բայց որ էսքան շատ կորուստներ... Ես կյանքում չէի պատկերացնի, որ կարող է էլ հետ չգնամ Չաղրութ»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«...Նախազգուշացումներ կային, բայց ոչ ոք չէր պատկերացնում, որ այս մասշտաբի կսկսի: Ոչ այդքան մասշտաբն է

վախեցնում, որքան գիտեք ինչ, որ մենք այսքան թույլ ենք... Ոչ թե մենք թույլ ենք, այլ մենք զենք չունենք: Մենք ուժեղ էինք, էլի ուժեղ ենք, զինանոցն էր թույլ երևի»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«...Մեզ համար խաղաղ ապրում էինք, չէինք պատկերացնում... Սպասում էինք միշտ, ամեն պահ, որ պատերազմ կլինի, բայց այս կարգի, որ կորցնեմ հայրենի գյուղս, կամ որ այսքան զոհեր կտանք՝ եղբորս հետ միասին, երբեք չէի պատկերացնի, չէի մտածի նման բանի մասին, բայց դե եղավ»: **19-35 տ. տեղահանված կին**

«Ընդհանրապես չէինք սպասում: Որ լսել էինք անգամ էդ լուրը, չէինք էլ հավատում, որ պատերազմ էր, մինչև չհարձավ, ասենք, հոկտեմբերի 8-ը, 9-ը, էդ ժամանակները նոր ինչքան գնում էր, էդքան ավելի էր էդ պատերազմը ոնց որ թեժանում: Չէինք սպասում, էլի, էդ բուռն բանին: Ավելի, չգիտեմ, լայնամասշտաբ սկսեցին: Մի ուրիշ ձև: Էս լրիվ ուրիշ էր, սենց չկար, էլի, չի էլ եղել սենց պատերազմ ընդհանրապես: Ոչ մեկս չէինք սպասում ու մինչև վերջ էլ հույս ունեինք, որ ստեղից հաստատ հետ ենք գնալու, էլի»: **19-35 տ. տեղահանված կին**

«...հիարկե չէինք պատկերացնում, որ մենք կարող է այս ձևով պարտվենք: Իրոք, էլի, որ այսքան մարդիկ ու այսքան տարածքներ... Ու դեռ չի վերջացել»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Անակնկալ, մենք չէինք սպասում, որ պատերազմ կլինի: Մեր համար խաղաղ ապրում էինք, աշխատում: Մեր Բերձորը օր օրի ծաղկում էր, ավելի լավն էր գնում, դե աշխատանք կար, նոր հիվանդանոց էր, նոր ոստիկանություն էին կառուցում,



*քուեջ պետք է կառուցեինք, դա էլ կիսատ մնաց, դե երկու դպրոց ունեինք, մանկապարտեզ, թանգարան, մի խոսքով՝ ամեն ինչ էլ ունեինք, երաժշտական դպրոց ունեինք»:* **51-75 տ. տեղահանված կին**

Ինչպես մեր նախկին՝ «Չետահայաց. Ճայներ պատերազմի և խաղաղության մասին» հետազոտությունը, այնպես էլ այս ուսումնասիրության շրջանակում տեղահանված մարդկանց հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ պատերազմի ընկալման և մեկնաբանման, վերջինիս հողավորման վրա էական ազդեցություն է ունեցել 2016 թ. ապրիլյան սրացումը<sup>9</sup>: Իբրև հաղթանակ ձևակերպված և հռչակված, հեռու թվացող անցյալում մնացած Ղարաբաղյան առաջին պատերազմն առավելապես աղոտ վերհուշ է նույնիսկ դրա հետ անմիջական և ուղիղ կապեր ունեցող հանրային շերտերի համար, իսկ ոչ վաղ անցյալի՝ 2016 թ. ապրիլյան սրացումը հայադրքեջանական սահմանին դարձել է այն հղման կետը, որի միջոցով ձևակերպվում է և մեկնաբանվում պատերազմը: Ընկալվելով իբրև իրական պատերազմ՝ այն մի կողմից սրել էր գալիք պատերազմի սպասումն ու վտանգը, մյուս կողմից՝ ձևավորել հանրային ակնկալիք, որում պատերազմը երևակայվում էր բացառապես կարճատև՝ մի քանի օր տևող բախումների՝ «փոքր կորուստների» հեռանկարով: Մի իմաստով՝ անակնկալ, իսկ մեկ այլ իմաստով՝ այդքան կանխատեսելի պատերազմը պատկերվում էր կարճատև բախումների, բանակցությունների կամ գերտերությունների (մասնավորապես՝ Ռուսաստանի)

**9.** Ղարաբաղյան կոնֆլիկտի, ինչպես նաև Ռուսաստանի՝ 2022 թ. փետրվարի 24-ին Ուկրաինայի վրա հարձակման և ընթացող պատերազմի շուրջ զրույցներից մեկի ժամանակ հետազոտող, սոցիալական մարդաբան Էվիյա Յովիանսկիյանը մտորում էր, թե ինչ չափա-նիշներով ենք առհասարակ այս կամ այն բռնի բախումը սահմանում իբրև պատերազմ. տևողությամբ, մարդկային և տարածքային կորուստներով, բռնության ուժով, կիրառվող զինատեսակներով: «Ապրիլյան սրացումը» քաղաքական մեղմասությունն է, թե՛ «2016 թ. [բառօրյա] պատերազմն» է չափազանցություն, երբ դրան նայում ենք 44 օր տևած և հազարավոր մարդկանց կյանք խլած Ղարաբաղյան երկրորդ պատերազմի դիտանկյունից: Ճարտանկվող կոնֆլիկտի համատեքստում պատերազմի և խաղաղության մասին հարցերի ձևակերպումը, դրանց վերլուծությունը և տեքստայնացումը [եզվի հղման շարունակական ջանք են պահանջում: Ի վերջո հանրային դիրքորոշումները և ըմբռնումները, ինչպես նաև դրանց վերլուծությունը մեծապես ազդվում են երևույթները այս կամ այն կերպ անվանելու գործընթացից (խմբ.՝ *Արևի Մանույան*):

միջնորդությամբ արագ հանգուցալուծման, հաղթանակի կամ փոխ-  
զիջման, բայց ո՛չ ստատուս-քվոյի նման շրջադարձային փոփո-  
խությամբ: Իսկ արդեն ընթացող պատերազմի պայմաններում այն  
հնարավորինս վաղ կանգնեցնելու ցանկությունը և միտքը կարմիր  
թելի նման անցնում էին մեր գրեթե բոլոր հարցազրույցներում:

«...Ապրիլյանը 4 օր տևեց, չէ՞: Էս պատերազմս էլ որ եղավ,  
մտածեցինք՝ մի քանի օր կտևի... Էդ հույսով էինք դուրս եկել,  
բոլորը համարյա էդ հույսով էին: Ամենավերջին օրը, որ ասում  
էին՝ Իշխանաձորը վերցրել են, մենք ասում էինք՝ չէ՛, սուտ ա,  
մենք գնալու ենք, Նորից հետ ենք գրավելու, Նորից գնալու ենք  
մեր տները: Չէինք հավատում, որ իրանցն ա, մինչև հիմա էլ  
չենք հավատում»: **14-18 տ. տեղահանված տղա**

Ինչպես 2016 թ. ապրիլյան սրացումը, այնպես էլ Ղարաբաղյան  
առաջին պատերազմը ընկալվում էին դրանց հաջորդած խաղաղ  
կամ համեմատաբար խաղաղ տարիների տեսանկյունից, իսկ  
Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ու պարտության շուրջ  
խորազնին, ընդարձակ և բազմակողմանի քննարկումների սա-  
կավորության պայմաններում մարդկանց դատողությունները մեծա-  
պես պայմանավորված էին առօրյա գրույցներով, այլևայլ դավա-  
դրապաշտական տեսություններով և մեդիա շահարկումներով:  
Ընդհանուր հոռետեսության համատեքստում այս կամ այն սոցիա-  
լական միջավայրում «ասում են»-ի շուրջ կառուցվող առօրյա գրույց-  
ներն ինչ-որ իմաստով նվազեցնում էին ապագայի անորոշությունը՝  
դառնալով անպատասխան հարցերի փնտրտուքի աղբյուր.  
«Ասում են՝ ռուսները Շուշին հետ են տալու», «ասում են՝ շուտով  
Հադրութը մերն ա լինելու»...

Ապրիլյան պատերազմից բացի՝ Ղարաբաղյան առաջին պա-  
տերազմի հիշատակումները և անցյալին հաճախակի հղումները ոչ  
միայն գնահատում են 1992-1994 թթ. պատերազմին հետևած տարի-  
ները որպես խաղաղ, այլև երևակայում են տեղի չունեցած հաղթա-  
նակը՝ հիմնվելով նախկին փորձի վրա. եթե 1994 թ. հայկական կողմը

կարողացել է հաղթել, ապա հաղթանակը հնարավոր էր նաև 2020 թվականին: Ինչո՞ւ նախկինում այս պատերազմը չի եղել, ինչպե՞ս են կարողացել խուսափել դրանից նախկին իշխանությունները, ինչո՞ւ չկարողացանք հաղթել, եթե այն ժամանակ հաղթել էինք, ինչպե՞ս էր հնարավոր կորցնել Շուշին<sup>10</sup>. փաստարկներ և հիմնավոր պատասխաններ ունեցող քաղաքական այս հարցերը, սակայն, դարաբաղյան կոնֆլիկտի շուրջ արտադրվող գերիշխող գիտելիքի և առասպելականացված նարատիվների ներքո ձևակերպվում էին իբրև անպատասխան, հասարակությանը ոչ հասու, «պատմական հզոր անցյալի» ձեռքբերումները ձախողելու և տանուլ տալու տեսանկյունից:

---

**10.** Շուշիի՝ անառիկ ամրոցի մասին քաղաքական պատումն արդեն իսկ առկա էր Ղարաբաղյան առաջին պատերազմի տարիներին: Ղարաբաղյան առաջին պատերազմի հետևանքով Շուշիի՝ հայկական կողմին անցնելուց հետո Ադրբեջանում, ինչպես 2020 թ. պատերազմից հետո Չայաստանում, տարածում գտավ հանրային-քաղաքական մի նարատիվ, որ փնտրում էր քաղաքը վաճառող, «առանց կռվի հանձնող» ներքին դավաճաններին: Այս հայելային պատումը երկու հասարակություններում էլ կառուցված է Շուշիի՝ հայկական և ադրբեջանական ինքնության հիմնասյուններից մեկը լինելու՝ տարիներ շարունակ հղկվող առանցքի շուրջ: Ինքնության այս պատումի սոցիալական, մշակութային և քաղաքական արմատների ուսումնասիրությունն անհրաժեշտություն է ինչպես Չայաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Այս հարցի շուրջ հետաքրքիր գրույցի համար շնորհակալ եմ սոցիոլոգ Սերգեյ Ռումյանցևին (*խմբ.՝ Արփի Մանույան*):

# ՄՏԱԾՈՒՄ ԷԻՆՔ՝

# ԱՊՐԻԼՅԱՆԻ ՆՄԱՆ ԿԼԻՆԻ

«Մտածում էինք՝ քառօրյայի նման չորս օր է, էլի, կհանդարտվի, կվերջանա, բայց տեսանք, որ սա քառօրյայի նման չի»:  
**36-50 տ. տեղահանված տղամարդ**

«...Մենք էլ գրեթե ոչ մի բան չենք վերցրել, որովհետև մտածում էինք՝ դուրս ենք գալիս մի քանի օրով, մտածում էինք՝ Ապրիլյանի նման կլինի՝ մի տասը օր...»:  
**19-35 տ. տեղահանված կին**

«Կարծում էինք՝ Ապրիլյան կռիվների նման 4 օր է, կվերջանա, կզնա, թե չէ գոնե շոր-մոր կվերցնեինք, մենք լրիվ տկտր ենք այնտեղից փախել: Սա երազ էր...»:  
**36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Դե մենք նեց էինք պատկերացնում, որ կարող է Ապրիլյան պատերազմի նման երեք, չորս, հինգ օր տևի, դրանով էլ վերջանա: Հետո, որ սկսեցինք կին, երեխա հանելը, ասացի՝ չէ՛, սրա վերջը լավ չի լինելու, և իրոք այդպես էլ եղավ: Վերջը ամբողջ Հաղորդ թվեցին, Շուշին, Քարվաճառն էլ հետը տվեցին»:  
**51-75 տ. տեղահանված տղամարդ**

«Ինձ թվում էր պատերազմի սկզբի օրերին, որ շուտով կավարտվի: Կավարտվի, որովհետև քառօրյայի ժամանակ ցույց տվեցինք մեր ուժը: Ու էնպես չի, որ ես կասկածել եմ բանակի կամ զինվորի կամ մեր ուժի վրա»: **51-75 տ. տեղահանված կին**

Այն, որ պատերազմի նման ելքն անհնար էր ու անհավանական, տեղահանվածներից շատերը մեկնաբանում էին այն տևտեսական ու ֆինանսական ներդրումներով, որոնք տարիներ շարունակ կատարվում էին Ղարաբաղում՝ հատկապես բանակցվող վերադարձի առարկա շրջաններում: Այլ գործոններ էին «անհավանականությունը» 2016 թ. ապրիլյան սրացումը Ռուսաստանի միջամտությամբ արագ դադարեցնելու հանգամանքով և «Ռուսաստանը պատերազմ թույլ չի տա» հույսով մեկնաբանությունը: Պարբերաբար հարցադրվում էր պետության՝ վերաբնակեցման ծրագրեր իրականացնելու կամ ռեսուրսներ ներդնելու հարցը մի համատեքստում, որ կանխորոշում էր պատերազմը:

Թեև Հայաստանի իշխանությունները մշտապես պնդել են, որ զանգվածային վերաբնակեցման ծրագրեր չեն իրականացրել, սակայն անհրաժեշտ է նշել, որ տարիներ շարունակ գործնականում այլևայլ աջակցության ծրագրերի ներդրմամբ խրախուսել են շատերին (հատկապես սոցիալապես անապահով շերտերին) տեղափոխվել ԼՂԻՄ-ի հարակից շրջաններ՝ բնակություն հաստատելու և տնտեսություն կառուցելու:

Այս՝ իբրև թե անուղղակի վերաբնակեցման և սոցիալական աջակցության քաղաքականությունների արդյունքում իննսունականների վերջից Քելբաջարի, Լաչինի և այլ շրջաններում բնակություն հաստատած բազմաթիվ մարդիկ ոչ միայն ապրել են այն համոզմամբ, որ պատերազմը քիչ հավանական է, այլև իրենց կյանքի բոլոր ասպեկտները և ոլորտները՝ անձնական, ընտանեկան և հանրային, սոցիալ-տնտեսական, կրթական և մշակութային, արմատավորել են այդ շրջաններում:

«Մենք այնքան հանգիստ էինք այնտեղ ապրում, բացարձակ չէինք մտածում, որ կգա մի օր, որ այդ հողերը մերը չեն լինի: Այդքան մարդիկ 96 թվից գնացել են՝ երիտասարդ ընտանիքներ, գնացել են, իրենց ամբողջ էներգիան ներդրել են այնտեղ, տուն են կառուցել, աշխատանքի միջոցներ են ստեղծել, այգիներ, ամեն ինչ ստեղծել են, որ կարող էին այստեղ մնալ, այստեղ մի բանի հասնել և արդյունքում չկորցնել այն, ինչ ստեղծել էին: Փաստացի իրենք կորցրին և՛ իրենց առողջությունը, և՛ իրենց քրտինքով ստեղծած տուն-տեղը, և՛ իրենց ապրուստի միջոցը»:

### **36-50 տ. տեղահանված կին**

Պատերազմի պատճառների կամ դրանից խուսափելու տարբերակների մասին զրույցներն ի վերջո հանգում էին մեր և նրանց «հողերի» տարանջատմանը: Ավելին՝ մեծ հաշվով ղարաբաղյան կոնֆլիկտը հանգեցվել է «հողի» հարցին: Ընդ որում՝ հողի սեփականատիրության հարցը մտածվում էր բարդ մի թևջուկում. նախ և առաջ խոսքը տեղի հարուստների և օլիգարխների մասին էր, որոնք ուզուրպացրել էին գրաված [վարելա]հողերը, ըստ էության՝ «նրանց» հողերը: Առանց զոհերի հողերի հանձնման գաղափարն, իհարկե, գերակա մտայնություն էր. դժվար է հրաժարվել կոնֆլիկտի խաղաղ հանգուցալուծման հնարավորությունից պատերազմի արհավիրքի վերապրումից հետո: Սակայն ԼՂԻՄ-ին հարող շրջաններում վերաբնակություն հաստատած մարդկանց որոշ մասը վստահ չէր, որ կընդուներ տարածքների գիջման քաղաքականությունը: Այդուհանդերձ, ներկայում գուցե ոչ հանրօգուտ, բայց անխուսափելի «Եթե... ապա»-ի մտածումը պատերազմից ավելի քան մեկ տարի անց ընդունելի էր համարում մշտապես բանակցությունների առարկա շրջանների հանձնումը Ադրբեջանին՝ հատկապես ցավոտ ըմբռնվող Հադրութի և Շուշիի պահպանման, ինչպես նաև զոհեր չունենալու հեռանկարի ներքո:

# ԻՐԵՆՑ ԸՈՂԵՐՆ ԻՐԵՆՑ ՏԱՅԻՆ, ՄԵՐՆ ԷԼ ՄԵԶ ՄՆԱՐ

«Ես կուզեի՝ էս պատերազմը չլիներ, մնար այնպես, ինչպես կար: Թեկուզ իրենց տարածքները տային, բայց մերը մնար մեզ, տենց էլ լուծվեր, բայց առանց զոհերի»: **36-50 տ. տեղահանված կին**

«Պատերազմ պիտի մի օր լիներ, բայց որ էդպես, չգիտեմ, Զադրութը, կամ եթե տալու պիտի լինեին, Ջաբրայիլը, որ նախկինում եղել ա Ադրբեջանինը, էդի տային, ինչ որ հայկական էր, մնար հայերին»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Բայց մենք գիտեինք արդեն, որ պարտվում ենք: Ու դրված էր 5 շրջանների հարցը՝ Ջաբրայիլ, Գորադիզ, Ադրամ, Ղուբաթլու... Ես կարծում եմ, որ մենք պետք ա վերադարձնեինք: Ճիշտ ա, էդ տարածքները գրավվել էին իմ պապայի ընկերների, հոպարների, հարազատների արյան գնով, բայց էս դեպքում ստացվեց՝ կամ դա պետք է տայինք, կամ ոչ մի բան, ու մենք ունեցանք էդ ոչ մի բանը»: **19-35 տ. տեղահանված կին**

«Ես չգիտեմ, թե ինչու սկսվեց այդ պատերազմը, բայց չպիտի սկսվեր: Այսինքն, եթե սկսվել էր, պիտի հենց սկզբից տային

հողերը, ոչ թե երիտասարդներին տանելին, լցնելին թշնամու  
դիմաց»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Պետք էր անընդհատ սրել իրավիճակը: Իրենք իրենց 1994 թվականից պարտված պետություն են համարում, համարվում են պարտված պետություն ու 30 տարի անընդհատ հայտարարում են, որ իրենք էսպիսին են, իրենք էնպիսին են: Պետք էր մի քիչ էլ օբյեկտիվ մտածել, որ դու Ադրբեջանի նման ֆինանսատնտեսական հնարավորություններ չունես: Իսկ էնտեղ ժողովուրդը ցույց ա անում, պահանջում ա երկրի ղեկավարից ինչ-որ արդյունք: Բա իրենց նվաստացնում են, իրենք էլ ուզում են գնան հին տեղերը, որտեղ ժամանակին ապրել են: Էն տեղերը, որոնք ոչ թե իրենցն են, այլ ապրել են և՛ հայեր, և՛ ադրբեջանցիներ, որովհետև եղել ա ԽՍՀՄ»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

Ղարաբաղյան թնջուկը երևան է բերում հարցի շուրջ հանրային ֆրագմենտար ընկալումները: Ամեն գնով պատերազմից խուսափելու, կոնֆլիկտը խաղաղ հանգուցալուծելու մղումը և առաջիկայում գինվելու և պատերազմի ուժով «հողերի» վերադարձի (մասնավորապես Չադրութի և Շուշիի) մտայնությունները ապրում են կողք կողքի՝ ներդաշնակ հակասականության մեջ: Միաժամանակ գինվելու և «ուժեղանալու» շուրջ մտորումները անպայմանորեն չէին հանգեցվում պատերազմին: Բանակի հզորացման, դրա՝ արդի գինատեսակներով համալրման կարևորությունն ընդգծվում էր «թշնամուն զսպելու» քաղաքականության տեսանկյունից նաև: Այսպես, Նախկինում բավարար չգինվելն ու բանակը չհզորացնելը, ինչպես մարդիկ էին ձևակերպում, 2020 թ. պատերազմի պատճառներից մեկն էր:

Պատերազմը հանգեցրել է դրա սկսվելու և պարտության պատճառների փնտրտուքին, բանակցային գործընթացի հարցադրմանը, հողերի «սեփականատերերի» հարցադրման դիսկուրսին, սակայն կոնֆլիկտի առնչությամբ հանրային գիտելիքի սուղ պաշարը, տիրապետող քաղաքական և հասարակական նարատիվները,



քաղաքական դաշտի՝ բարդ և զգայուն հարցերի շուրջ հանրային գիտելիք արտադրելու անկարողությունը ձևավորել են մի իրավիճակ, որում պատերազմից թերևս առավել շատ տուժած հանրային խմբերը հակված են վերոնշյալ հարցերի շուրջ բացատրություններ փնտրելիս ընկղմվել դավադրապաշտական մտայնությունների կամ ռոմանտիկացված ապագայի իրենց պատկերացումների մեջ, որոնք առավելապես մարդկային իղձերի և ցանկությունների տիրույթում են: Չնայած ուժային բալանսի, բանակի համակարգային խնդիրների, ինստիտուցիոնալ կոռուպցիայի շուրջ մտորումներին՝ տեղահանված մարդկանց շրջանում տարածված են նաև «ծախված հողերի» մասին այլևայլ դատողությունները, որոնց համատեքստում պատերազմի պարտությունը հաճախ հանգեցվում է նախկին ու ներկա իշխանությունների դավաճանությունների և գաղտնի գործարքների հարցին:



# ԱՊԱԳԱՅԻ ԵՎ ԽԱՂԱՂ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՖՐԱԳՄԵՆՏԱՐ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Պատերազմը խաթարում է նաև սոցիալական միջավայրերը և հարաբերությունները. մարդիկ կարոտով են հիշում երբեմնի սոցիալական կյանքը: Շուշիից, Չուրուֆից, Քելբաջարից և Լաչինից տեղահանված մարդկանց համար Հայաստանում կյանքը հիմնականում անսովոր է և օտար. «սեփական անկյան» կորուստը սոցիալական և մշակութային շերտեր ունի: Հետպատերազմական նոր իրավիճակում Հայաստանում կարգավիճակը հիմնականում ընկալվում է իբրև ժամանակավոր, իսկ սեփական կյանքի հանդեպ դիրքորոշումներում գերակայում են «օրվա հացի հարցը լուծելու», «գոյատևելու» մտայնությունները: Ապագայի երկարաժամկետ նախագծումը լուսանցք է մղված: Կարող ենք ասել, որ ապագայի շուրջ եզակի են լիահույս կամ լավատեսական դիրքորոշումները. ընդհանուր առմամբ տիրապետող են ապագայի հոռետեսական՝ «ոչ թե ապրում, այլ պարզապես շնչում ենք, բայց դրա մեջ չէ կյանքը» պատկերացումները: Հայաստանի տարբեր մարզերում բնակություն հաստատած տեղահանվածները, մասնավորապես Ղարաբաղում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվողները, դժվարությամբ են հարմարվում հատկապես քաղաքային կյանքին: Աղապտացիայի այս բարդ ու ցավոտ գործընթացում շատերը նախորդ կյանքի վերհուշի շարունակական վերակառուցման մեջ են:

Պատերազմի հետևանքներն ու փորձառությունը կաղապարում են մարդկանց՝ մտածելու բացառապես կենցաղային հարցերի կարճաժամկետ կարգավորման շուրջ, և սահմանափակում ապագան ավելի լայն երևակայելու հնարավորությունը, իսկ իրավիճակի անկանխատեսելիությունն ազդում է կյանքի բոլոր ոլորտների վրա:

Այդուհանդերձ, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, տարբեր են ապագայի մասին մարդկանց պատկերացումները: Որքան էլ ապագայի անորոշությունը անհանգստացնի միջին տարիքի կամ տարեց մարդկանց, նրանք չեն դիտարկում ապագան որպես իրենցից կախված մի բան: Ապագայի անորոշությունները հաղթահարելու քայլերը մեծապես նկատելի են տեղահանված երիտասարդների շրջանում, որոնք փորձում են Հայաստանում իրենց աշխատանքի, կարողությունների զարգացման միջոցով հնարավոր դարձնել Ղարաբաղում ապագա հասարակական կյանքը: Դպրոցահասակ երիտասարդները լավ կրթություն ստանալու մեծ մղում ունեն, միաժամանակ, նրանցից ոմանք հարկադրված են համատեղել կրթությունն ու աշխատանքը՝ ընտանիքին օգնելու համար: Պատերազմը ստիպել է նրանց ավելի հոգսաշատ առօրյայով ապրել:

Կանանց՝ մայր դառնալու, որդի ունենալու հանրային և բարոյական ճնշումները հատկապես սրվում են պատերազմների հետևախորքին: Մեր հետազոտությունը ևս երևան է բերում աղջիկների՝ ապագայում զավակներ ունենալու կարևորությունն ընդգծելու միտումը, որն ինչպես հանրային ճնշման արտահայտում է, այնպես էլ անձնական ողբերգության և կորստի վերապրման միջոց:

# ԶԳԻՏԵՆՔ ՎԱՂՎԱ ՕՐԸ

«...Այդ ապագա բառը թռել է, ապագան ո՞րն է: Ես այդպես եմ [մտածում], այսինքն՝ ես կարող է հուսահատված եմ, այդպես եմ ասում, բայց դե մեկն էլ չեմ տեսնում, որ ինձ հույս տա, ասի՛ այսպես արա, լավ կլինի, ասում է՝ դե այսօր կանք, վաղը՝ չգիտենք. այսօր բոլորն այդպես են խոսում»: **35-50 տ. տեղահանված տղամարդ.**

«Հիմա ոնց որ օտար լինես, տենց էլ կա: Չես կարող ասել՝ հարազատ է: Կարող է տարիներ հետո մնաս, արդեն հարազատ դառնա, բայց հիմա ոնց որ օտար լինես: Ոչ մի ծանոթ չկա, անծանոթ քաղաք՝ էդքանը»: **19-35 տ. տեղահանված կին**

«Ես հիմա ընդհանրապես պլաններ չեմ [կազմում], որովհետև չգիտեմ՝ վաղվա օրը ոնց է լինելու: Կոպիտ ասած՝ ապրում ենք օրվա հացով: Անորոշ վիճակ է, չգիտենք՝ վաղը ինչ է լինելու մեզ հետ: Դրա համար սուս ու փուս նստած ենք տեղներս, տեսնենք՝ ինչ են որոշում: Մեկ է, ինչ էլ որոշեն, դա էլ անելու են»: **19-35 տ. տեղահանված տղամարդ.**

«Ապագան ո՞րն է, ես ապագա չեմ տեսնում: Այս պահի դրությամբ, այս տեմպով ոնց գնում է, ես ապագա չեմ տեսնում: Ի՞նչ ապագա, օր օրի վատանում է, օր օրի արդեն Զայաստանի տարածքից են ուզում վերցնեն...»: **36-50 տ. տեղահանված տղամարդ.**

«Էնտեղ ի՞նչ ապագա, հիմա էլ ի՞նչ ապագա: Որտեղ բարձր սարեր են՝ իրենց դիրքերն են»: **36-50 տ. տեղահանված կին**

# ԶԳՈՒՄ ԵՄ՝ ԱՅԼԵՎՍ ԵՐԵԽԱԿ ԶԵՄ

«Իրականում ոչ մեկի վրա իմ հույսը չեմ դնում: Արդեն սկսել եմ ՅԿ-ների կողմից կազմակերպվող բազմաթիվ դասընթացների մասնակցել, գիտելիքներս կշատացնեմ ու նույնիսկ ինքս հետո Արցախում կբացեմ իմ սեփական ՅԿ-ն ու իվենթներ կկազմակերպեմ, մարդկանց առօրյան ավելի հետաքրքիր կդարձնեմ, բոլորին կգրադեցնեմ, որ մոռանան Արցախը լքելու մասին, որովհետև եթե բոլորը լքեն, մեր թշնամու ուզածը կանեն: Իսկ ես չեմ ուզում՝ էդպես լինի, որովհետև շատ ենք պայքարել դրա համար: Ես հիմա մտովի էլ եմ պայքարում, որ հետ պիտի գնանք»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«Ունեմ պլաններ, ուզում եմ ավարտել, մասնագիտությունովս աշխատել ու լիքը երեխաներ ունենալ: Մեկ էլ մի տղա երեխա ունենամ, անունը դնեմ եղբորս անունով»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«Մինչ պատերազմը ես երեխայի ստատուսում էի: Հիմա զգում եմ՝ ես էլ երեխա չեմ: Մինչ պատերազմը մտածում էի՝ կդառնամ հայտնի դերասանուհի, կգամ Հադրութ, կբարձրանամ բեմ, բոլորն ինձ կտեսնեն՝ ինչ մեծ հաջողությունների եմ հասել... Հիմա՝ չէ: Ուզում եմ, օրինակ, դառնամ ՄԱԿ-ի գրասենյակի աշխատող ու պաշտպանեմ բոլոր էն երեխաների իրավունքները, որոնք ոտնահարվել են պատերազմի ժամանակ, որովհետև չեմ ուզում, որ իմ նման էլի երեխաներ լինեն»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«Դե ինձ թվում է՝ պետությունը երևի ուսման ինչ-որ գումարներ կտա: Ասում էր, որ բոլոր քաջաթաղցիներին, ովքեր եկել են, պետք է ուսման տան, որ մասնագիտությունների տեր դառնան, որ մի տեղ աշխատեն, իրանցը ստեղծեն: Չգիտեմ, երևի ոչ մի պահանջ չունեմ իրենցից, եթե կարողանային ինչ-որ մի ձև դասավորելիս, որ վարսահարդարություն սովորեի, լավ կլիներ»: **14-18 տ. տեղահանված տղա**

«Ապագայի հետ կապված ծրագրեր չունեմ: Աշխատում եմ ուղղակի, որ ինչ-որ չափով թեթևացնեմ ընտանիքիս հոգսը, կարիքները, առօրյա ծախսերս հոգամ: Բայց մեծ նպատակներ, որ կային մինչև պատերազմը, [չունեմ]... Իմ նշանդրեքը պետք է լիներ հոկտեմբերի 15-ին, արդեն ամեն ինչ պատրաստ էր դրա համար, բայց դե չեղավ: ...Բայց ես չեմ ուզում, որ էն ապրումները, որ ես եմ ունեցել, ունենա իմ երեխան, դրա համար արժե՞ հիմա ընտանիք կազմել, եթե անգամ վստահ չես քո անձի անվտանգության հարցում»: **19-35 տ. տեղահանված կին**

Սոցիալական անապահովությունն էլ ավելի անիրական է դարձնում ապագան երևակայելու հնարավորությունները: Տեղահանված մարդկանց համար ապագայի անորոշությունը հաղթահարող հիմնարար առանցք են տունը և տան գաղափարը, որն ունի ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական ներիմաստներ: Եթե պատերազմի հետևանքով առավել խոցելի և սոցիալապես անապահով դրության մեջ հայտնված մարդիկ էական նշանակություն չեն տալիս ապագա տան՝ այս կամ այն տեղում լինելու փաստին, ապա մյուսները տան հարցը դիտարկում են Ղարաբաղ վերադառնալու հետ անմիջական կապի մեջ՝ վերադարձ Ղարաբաղի կորցրած տուն: Այս համատեքստում Ղարաբաղը կամ տունը նույնանում են սեփական բնակավայրի, համայնքի հետ: Սա շատ ավելի սուր արտահայտված է Հադրութից տեղահանված մարդկանց դիրքորոշումներում: Նրանք են, որ մեծ մասամբ բացառում են Ղարաբաղ վերադարձը առանց Հադրութի՝ հայկական վերահսկողությանն անցնելու:

Տևից տուն տեղափոխությունները, պետության կամ բարերարների տրամադրած կացարաններում, մտերիմների և ծանոթների տներում ապրելը ոչ միայն շարունակական կախյալության մեջ են դնում տեղահանված մարդկանց, այլև խորացնում են անորոշության և անկանխատեսելիության շերտերը, խոչընդոտում երկարաժամկետ հեռանկարում կազմակերպել աշխատանքին առնչվող հարցերը: Խաթարված սոցիալական կայունությունը և բազմազան սոցիալական խնդիրները մշուշում են ինչպես անհատական, այնպես էլ հանրային-քաղաքական ապագայի մասին պատկերացումները:



# ԱՊԱԳԱՆ ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ ՏՈՒՆՆ Է

«...Ժողովրդին անընդհատ խաբում են: Մեկ ասում են՝ տուն են տալիս, մեկ փող են տալիս, հետո ասում են՝ Երևանում են տուն տալիս, հետո ասում են՝ Ղարաբաղում են տալիս, հետո չեն տալիս, փող են տալիս: Ամսական վճարներ կային, դա էլ կտրեցին, այսինքն՝ ինչ որ տալիս էին, հիմա ոչ մի բան չեն տալիս»: **14-18 տ. տեղահանված տղա**

«Իմ համար ընդունելին էն կլինի, որ ամեն մարդ գնա իր տունը, ամբողջ կյանքում վարձով չապրի: Գնա իր տունը, թեկուզ քանդած վիճակում էլ լինի, վառած վիճակում էլ լինի, տան էդ մարդկանց, ամեն մարդ իր տունը նորից գրոյից սարքի, հող ու ջրի մեջ մնա»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Կուզեի՝ Գորիսում մի բարձրահարկ շենք կառուցվեր, էդ մարդկանց, որոնց մեջ մտնում են նաև իմ տղաները, բնակարանով ապահովեին: Նախ նրա համար, որ հիմա մեզ պետք ա, որ Գորիսը որպես սահմանամերձ [թաղաք] բնակեցված լինի: Սա մի մեծ պատճառ ա, որ էստեղ գտնվող վերաբնակեցվածները չգնան նորից: Մեզ ու մեր կառավարությանը պետք ա, որ էստեղ մարդիկ ապրեն ու էս սահմանը պինդ պահեն...»: **51-70 տ. տեղահանված կին**

«Ապագան առաջին հերթին տուն ու տանիք, մասնագիտություն, աշխատանք ունենալն ա: Ապագան առաջին հերթին տունն ու խաղաղությունն ա»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Դա [տունը] պիտի լինի, որ սկսենք հանգիստ ապրել: ...Աշխատանք լինի, մեր երկրում էլ խաղաղություն լինի, որ մարդիկ հանգիստ իրենց աշխատանքով ապրեն»: **36-50 տ. տեղահանված կին**

«Ե՛վ բնակարանային խնդիրներ կան, և՛ սոցիալական ծանր պայմաններ կան, կենցաղային մեծ պրոբլեմների առաջ ենք կանգնում: Բայց հուսով ենք, որ ժամանակի ընթացքում ամեն ինչ կհարթվի, և հուսով եմ, որ կվերադառնանք մեր տները: Որովհետև տուն հասկացությունը մենակ չորս պատ ու տանիքը չի, էլի»: **51-70 տ. տեղահանված տղամարդ**

«Իմ գյուղը որ չկա, Ղարաբաղը ինձ համար գոյություն չունի: Եթե ասեն՝ իմ գյուղը հետ են տալիս, վաղը կգնամ... Բայց ես էլ մտադիր չեմ Ղարաբաղ գնալ, ի՞նչ եմ տեսել ես, որ երեխեքս տեսնեն»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Հաղորդեցին էստեղ ծնվել է, էստեղ մեծացել է: Հիմա ինքը ի՞նչ սրտով պիտի գնա [Ղարաբաղ], թեկուզ եթե պալատ տան: Ես, օրինակ, չեմ գնա: Ես ասել եմ ու էլի կասեմ, թեկուզ ինձ ընդեղ եսիմ ինչ տուն էլ տան, ես չեմ գնա Ղարաբաղ, որ էդքան սիրել եմ էդ երկիրը»: **51-75 տ. տեղահանված կին**

Հետպատերազմական համատեքստում Ղարաբաղի հարցի կարճաժամկետ հեռանկարում լուծում չստանալու վստահությունը մի կողմից դրդում է տեղահանված մարդկանց մտածել Հայաստանից և Ղարաբաղից հեռու ապրելու մասին, մյուս կողմից՝ սրված օտարութ-

յան, խոցելիության, կորստի զգացումները կասկածի տակ են դնում արտերկրում կայունության վերագտնման, սոցիալական կապեր ու միջավայրեր ձևավորելու հեռանկարը:

Ղարաբաղում ապագա ունենալը սահմանվում է Ղարաբաղի հարցի կարգավորմամբ: Չնայած պատերազմի արհավիրքին և խաղաղության հռչակվող ցանկություններին՝ տեղահանված մարդկանց զգալի մասը հարցի կարգավորումը հանգեցնում է Հայաստանի և Ղարաբաղի զինվելուն, կամ ինչպես իրենք են ձևակերպում՝ ուժեղանալուն: «Ուժն է ծնում իրավունք» տարածված կարգախոսն առաջնորդում է «հզոր բանակի» մասին մարդկանց ընկալումները:

ՀՌԿԿ-Հայաստանի ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ 2021 թ. հանրային կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայաստանցիների 35%-ը հակամարտության վերջնական կարգավորման ձևերից նախ և առաջ նախընտրում է «Արցախի միացումը Հայաստանին» տարբերակը, ևս 35%-ը՝ «Արցախի անկախացումը», և 19%-ն առանձնացնում է ՌԴ-ի կազմում Արցախին հատուկ կարգավիճակ շնորհելը<sup>11,12</sup>:

Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, Ղարաբաղ վերադառնալու և այնտեղ նորից բնակվելու հարցը քննարկվում է Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման համատեքստում. «Ղարաբաղի ապագան կարգավիճակի ճանաչումն է, թեկուզ միայն այն տարածքներում, որոնք այժմ հայկական վերահսկողության տակ են», «Դե որ անկախանա, ինձ թվում է՝ կապրի Ղարաբաղը...»:

---

**11.** ՀՌԿԿ. (2021). Հանրային կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ. վերցվել է՝ [https://www.crc.am/wp-content/uploads/2021/03/REPORT\\_2021\\_ARM\\_FINAL.pdf](https://www.crc.am/wp-content/uploads/2021/03/REPORT_2021_ARM_FINAL.pdf):

**12.** Որքան էլ հասարակական կարծիքի ուսումնասիրությունները կարևոր են հանրային տրամադրությունների այս կամ այն միտումը դիտարկելու համար, էական է հաշվի առնել, որ քաղաքականապես զգայուն համատեքստերում դրանց ձևակերպած հարցերը և առաջարկվող պատասխանները մեծ չափով ենթարկված են քաղաքական և սոցիալական պահանջարկի: Այս առումով առաջադրված քաղաքական հարցերին մարդիկ տալիս են ոչ թե քաղաքական պատասխաններ, այլ նախապատվություններ և ցանկություններ: Այս դրությունը հատկապես տեսանելի է, երբ, ինչպես մատնանշում է Բուրդիոն, մարդիկ այդ հարցերի շուրջ նախքան հետազոտությունը խորհելու կարիք և ժամանակ չեն ունեցել, որոնց շուրջ խորքային գիտելիք չեն հավաքել (Բուրդիոն, 2019):

Ադրբեջանի վերահսկողության ներքո սեփական համայնք վերադառնալը կամ Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակով Ղարաբաղի գոյությունը տեղահանված մարդիկ ընդունելի չեն համարում:

Ղարաբաղի ապագան «հողերը» հետ բերելով երևակայելը կարմիր թելի նման անցնում է գրեթե բոլոր հարցազրույցներում: Այս իդեերը, ուժով տարածքների վերադարձի շուրջ դատողությունները ինքնանդրադարձի են ենթարկվում, երբ վերհիշվում է պատերազմի արհավիրքը:

# ԱՊԱԳԱՆ

## ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԵՌՈՒ

«Ես՝ ջահել տղա, մտածում եմ՝ ընտանիք կազմեմ ու չեմ ուզում Արցախից դուրս ապրեմ: Ուզում եմ գնամ, Արցախում ապրեմ: Բայց ո՞վ ա իմ անվտանգությունը ապահովում: Խաղաղապահ ուժե՞րը: Ես նույնիսկ հայի պահած սահմանի վրա չեմ վստահ, մնում էր՝ ռուսի պահած սահմանի վրա վստահ լինեի»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Ես իմ ապագան լրիվ ուրիշ ձև էի պատկերացնում՝ Հայաստանի սահմաններում: ...Իսկ հիմա ես մտածում եմ դուրս գնալու մասին»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«Մեզ առաջարկում են՝ եկե՛ք Ղարաբաղ, ապրե՛ք, հայրս չի համաձայնում, ասում է՝ ես ամեն օր գնում եմ Եռաբլուր: Հիմա որ ես գնամ Ղարաբաղ, ո՞նց եմ գնալու [Եռաբլուր], ես չեմ թողնի իմ երեխուն, գնամ այնտեղ ապրելու»: **19-35 տ. տեղահանված կին**

«Չեմ մտածում, որ Հադրութ հետ կգնանք, որովհետև Հադրութի Մեծ Թաղեր գյուղը հող են սարքել... Թեկուզ եթե գնաս էնտեղ, ի՞նչ հույսով տուն դնես ու ապրես, եթե պիտի նորից պատերազմ լինի...»: **19-35 տ. տեղահանված կին**

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԷԼ ԱՅՍՕՐ ԱՆՎՏԱՆԳ ԶԷ

«Հայաստանում մնալու ոչ մի պլան չունեմ: Ճիշտ է, Ռուսաստան կամ արտերկիր գնալու վերաբերյալ էլ չունեմ: Իմ ուղեղը ինձ թելադրում է, որ, օրինակ, էս տարածքը մի պատկերացրու, պատկերացրու էլ տեղ՝ Ռուսաստանում, էլ տեղի մասին մտածի: Ու մենակ Ռուսաստանն է անընդհատ գլխիս գալիս՝ չգիտեմ ինչի»: **19-35 տ. տեղահանված կին**

«Չէ՛, ես ինձ Հայաստանում անվտանգ չեմ զգում: Եթե գնաս դուրս՝ ինչ-որ մի երրորդ երկիր, էդտեղ էլ է անորոշ, կարո՞ղ ես ապրել, չէ՞ս կարող՝ առանց քո երկրի, առանց քո հարազատ լեզվի, քո օդ ու ջրի: Իսկ երաշխիք կամ, որ էլ տեղ ապահով ա ու անվտանգ ա»: **19-35 տ. տեղահանված կին**

«Ես չեմ համակերպվում էն մտքի հետ, որ մենք մշտապես Հայաստանում պիտի ապրենք: Ես մտածում եմ, որ պիտի ինչ-որ ձևով, թե՛ մեր համառությամբ, թե՛ Միևսկի խմբի օգնությամբ, մի խոսքով ինչ-որ ձևով մենք պիտի անպայման հետ գնանք մեր երկիր: Մեր ապագան Ղարաբաղում է, մենք Հայաստանում ապագա չունենք»: **51-75 տ. տեղահանված կին**

«Ժողովուրդը Հայաստանում ապագայի հարցով վստահություն չունի, ղարաբաղցին ինչպե՞ս կարող է վստահություն ունենալ: Էն դեպքում Հայաստանը միշտ հայտարարում էր,

որ Ղարաբաղի անվտանգության երաշխավորն է»: **51-75 տ. տեղահանված կին**

«Ես մտածել եմ՝ Նորից վերադառնամ, Արցախում ապրեմ, բայց խաղաղություն է՛նտեղ էլ չեմ տեսնում, դրա համար եմ վախենում, հոգեբանորեն պատրաստ չեմ, պատրաստ չեմ իմ երեխեքին, իմ կնոջը տեղափոխեմ է՛նտեղ՝ Նորից ապրենք, այ է՛նտեղ կոնկրետ խաղաղության բացակայության գործոնն ավելի մեծ է: Նույնը Սյունիքում է»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

# ՀՈՂԵՐԸ ՆՈՐԻՑ ՄԵՐՆ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ, ՊԵՏՔ Է ԶԻՆՎԵՆՔ

«Զգիտեմ, կռիվ կլինի նորից, թե ինչ-որ ստորագրություններով, բայց ես զգում եմ, որ նորից այդ հողը մերն է լինելու: Նորից իրենք կգնան, ու մենք կգնանք մեր հողն ապրելու: Ինձ այդպես է թվում, չգիտեմ: Մի տարի անցել է պատերազմից, բայց ես իմ հույսը չեմ կորցրել, որ մենք էլի գնալու ենք»: **19-35 տ. տեղահանված կին**

«Ադրբեջանի հետ կռիվը պետք է անպայման լինի: Պիտի գենք ունենանք, գենք»: **51-70 տ. տեղահանված տղամարդ**

«Թող դիվանագիտական միջոցներով հետ բերեն, որովհետև պատերազմը տեսել եմ արդեն, ու ոչ թե ես չեմ ուզե՞նա տեսնեմ, այլ չեմ ուզե՞նա՝ մնացածը տեսնեմ»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«...Եթե 7 շրջանը նորից հետ գրավեն, Իշխանաձորը նորից գրավեն, ես կգնամ, եթե ծնողներս էլ չգնան, ես կգնամ: Սիրում եմ էլնտեղ ապրել, բայց Ստեփանակերտում չենք կարա հարմարվենք»: **14-18 տ. տեղահանված տղա**



«Ղարաբաղի ապագան ավելի լավ եմ պատկերացնում: Ղարաբաղը հաստատ էլի մերն է լինելու անպայման: Ես վստահ եմ: Թեկուզ 20, 30 տարի հետո հաստատ էլի մերն ա լինելու Ղարաբաղը»: **19-35 տ. տեղահանված կին**

«Երևի պետք է Հադրութն ու Շուշին հաստատ վերադարձվեն. բուն հայկական տարածքները վերադարձվեն, ու կյանքը շարունակվի էնպես, ոնց եղել է: Մեր դիվանագետները պետք է միջազգային հանրությանը ներկայացնեն, որ դրանք բուն հայկական տարածքներ են, մշակույթը զարգանում էր, կյանք կար, ամեն ինչ լավ էր»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

# ԳՈՆԵ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

«Ղարաբաղի ապագան ես միայն պատկերացնում եմ մի ձևով՝  
ՀՀ կազմի մեջ: *ՀԿԱՕ*-ի տարածքը Ղարաբաղն ունենա ու մտնի  
ՀՀ կազմի մեջ, դառնա ՀՀ մարզ»: **14-18 տ. տեղահանված տղա**

«Երևի [մտնի] Ռուսաստանի կազմի մեջ: Ոնց գրիչի մի  
ծայրով Ղարաբաղը ճանաչեցին ադրբեջանական տարածք:  
Կարծում եմ՝ հիմա էլ գրիչի ծայրի տարածք ա, երևի էլի  
ծայրով կտան ռուսներին, կմնա տենց կամ էլ ընդհանրապես  
կվերանա»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**

«...Հարցի լուծման ձևը միայն այն է, որ միջազգային ձևով  
Ղարաբաղը անկախ ճանաչեն. Ա՛ Չայաստանը ճանաչի, Ա՛  
ամբողջ աշխարհը ճանաչի: Ուրիշ տարբերակ չկա: Ո՛չ ռուսն է  
էս հարցը լուծելու, ո՛չ ադրբեջանցին, ո՛չ էլ Չայաստանն է ի  
վիճակի էս հարցը լուծել»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Գոնե կարգավիճակ տան Ղարաբաղին... Մենք հիմա ոչ  
փախստականի կարգավիճակ ունենք... ոչ մի կարգավիճակ  
չունենք՝ օդից կախված մարդիկ ենք»: **36-50 տ. տեղահանված  
կին**

«Երևի միշտ պատերազմների մեջ կլինենք Ղարաբաղի հարցի լուծման պատճառով, որովհետև ոչ մի երկրի ղեկավար չի սահմանում, որ Ղարաբաղը անկախ է: Ինձ թվում է՝ մինչև չորոշեն անկախությունը Ղարաբաղի, միշտ պատերազմներ են լինելու»:

**14-18 տ. տեղահանված տղա**

«Ներկա պահին իմ տղան դեռ ծառայում է, հունվարին Նոր վերջացնելու է: Մենք այնտեղ որոշել էինք տուն վերցնել: Իմ երեխան համաձայն չի, ասում է՝ ման, հասկանո՞ւմ ես, որ պատերազմը սկսվի, դուք մնալու եք տուպիկի մեջ: Քելբաջարի ճամփեն բաց չի, որ դուք կարողանաք փախնեք: Լաչինը իրենց ձեռքում ա»:

**35-50 տ. տեղահանված կին**

# ԱՊՐԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ

«...Կարող է առավուտ դուրս գաս, վերևից մի բան ընկնի վրադ, ու բարի գալուստ Ղարաբաղ»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Պատերազմից հետո էլ էդ լարվածությունը կա, հիմա ճիշտ է, մենք քնում ենք, բայց մեր հոգեբանության մեջ մենք չենք քնում: Մենք ամեն պահ վախենում, սպասում ենք, որ միգուցե նորից պատերազմ կսկսվի: Բա հետո ո՞ր ենք գնալու»:  
**19-35 տ. տեղահանված կին**

«...Հիմա մարդ քնից զարթնում ու մտածում ա՛յսօր էլ ապրեցի: Կարող է կեսօրին լինի [պատերազմ], կարող է կեսգիշերն անց...»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը կործանարար ազդեցություն է ունեցել նաև խաղաղության, տարածաշրջանում խաղաղ համակեցության հանրային պատկերացումների և ըմբռնումների վրա: Կարևոր է ընդգծել, որ տարածաշրջանը չի ընկալվում իբրև քաղաքական և աշխարհագրական միավոր, որտեղ ծավալվում և զարգանում են Հայաստանի՝ իբրև սուբյեկտի քաղաքական, պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական հարաբերություններն այլ պետությունների հետ: Տարածաշրջանն ընդհանուր առմամբ ընկալվում է իբրև թշնամական միջավայր, որում Հայաստանը «չորս կողմից շրջապատված է հակառակորդներով»: Զոհի և

ճնշվածի այս դրությունը մեկնաբանվում է որպես իրողություն, որը շտկելու կամ փոխելու հեռանկար կամ գոյություն չունի, կամ փոխելու գործում Հայաստանին չի վերագրվում որևէ քաղաքական դերակատարում: Այս պայմաններում, ահա, խաղաղության և խաղաղ համակեցության հնարավորությունը հանգում է առանց Ադրբեջանի և Թուրքիայի խաղաղության գաղափարին. խաղաղությունը և խաղաղ համակեցությունը ոչ թե տարածաշրջանում է, տարածաշրջանային այս կամ այն երկրի հետ, այլ առանց դրանց:

Ավելին, եթե 2018-2019 թվականների մեր հետազոտությունը Հայաստանի սահմանամերձ և ոչ սահմանամերձ շրջաններում, ինչպես նաև Ղարաբաղում ցույց էր տալիս, որ խաղաղության և խաղաղ համակեցության հեռանկարները աղոտ, բայց Նշմարվում են հանրային դիրքորոշումներում, ապա պատերազմը կործանարար ազդեցություն է ունեցել դրանց վրա: Խաղաղությունը մի կողմից ցանկալի է, իսկ մյուս կողմից՝ անպատկերացելի՝ պատերազմի աղետից հետո: Մարդիկ ուզում են խաղաղություն, բայց չեն պատկերացնում, թե ինչպես է դա հնարավոր «այս ամեն ինչից հետո»:

Խաղաղության և խաղաղ համակեցության հարցի շուրջ առավել արմատական դիրքորոշում ունեն Հադրութի և Շուշիի շրջաններից տեղահանվածները՝ գրեթե անպատկերացելի համարելով տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի հետ հաշտությունը կամ հարևանությունը: Խաղաղության հարցը պատկերվում է միայն այդ երկու շրջանների՝ քաղաքական կամ Նոր պատերազմի ճանապարհով վերադարձի պարագայում:

Որքան էլ ցավալի է, այդուհանդերձ, անարդարության և ստորացման, արժանապատվության, հայրենիքի կորստի զգացումները, որ առկա են մարդկանց մեջ (դրանք հաճախ շահարկում և խորացնում են այս կամ այն քաղաքական շահի ներկայացուցիչները, լրագրողները, հանրային ինտելեկտուալները), հնարավոր են դարձնում Նոր պատերազմի գաղափարը, որը կլինի ռևանշիստական, որի միջոցով հնարավոր կլինի «հետ բերել հողերը», «հետ բերել տունը»:

Խաղաղության և պատերազմի, իրականության, ապագայի և սեփական իղձերի մարդկանց դիրքորոշումներն էկլեկտիկ են և ֆրագմենտար: Մշակութային տարբեր շերտերով պայմանավորված նման ֆրագմենտար ըմբռումները և դիրքորոշումները առկա են գրեթե բոլոր հարցազրույցներում՝ ցուցանելով այս բարդ հարցերի շուրջ մարդկանց խրթին և խառը պատկերացումները և զգացմունքները:

Խաղաղության աղոտ պատկերացումները հեռավոր ապագայի տիրույթում են: Տիրապետող դիրքորոշում է այն, որ սերունդների փոփոխության արդյունքում միայն հնարավոր կլինի տարածաշրջանում խաղաղ համակեցությունը: Խաղաղության պայմանագրի անհրաժեշտության շուրջ դատողությունները թեև շատ հազվադեպ, բայց նշմարվում են հետազոտության շրջանակում:

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՌԱՆՑ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ

«Մենք ունենք 4 հարևան պետություն, բայց երևի մենակ Պարսկաստանի հետ կպատկերացնեմ [խաղաղությունը]: Ռուսն էլ իմ համար վստահելի չի... Հայ ազգը, հայ զինվորը տանջվում էր սահմանին, ոչ մեկ օգնության չէր գնում: Բայց Թուրքիայի ու Ադրբեջանի հետ երբեք չեմ պատկերացնում էր ամեն ինչը, երբեք, որովհետև ես ժամ առաջ ուզում եմ ամենավատը լսեմ իրանցից: Ամեն դեպքում իմ համար ինքը թշնամի երկիր ա համարվում, թշնամի էլ կմնա հաստատ»:

**19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Կուզեի առաջվա նման ապրեի՞նք, բայց դե դա պատկերացումներ են, երազանքներ են: Կարող է լինի, բայց չգիտեմ՝ մենք այդ ժամանակ կլինե՞նք, թե՞ չենք լինի, քանի՞ տարի հետո կլինի»: **36-50 տ. տեղահանված տղամարդ**

«Զէ՛, հնարավոր չի: Ինչ-որ բան իրենք պիտի վերադարձնեն՝ մի բանի շրջաններ, որպեսզի խաղաղ ապրենք: Օրինակ՝ Շուշին: Հենց Շուշին, Քարվաճառը պետք ա հետ տան, Լաչինի էս ճանապարհները, որը կապում ա Հայաստանի հետ, դրանք պիտի վերադարձնեն»: **51-75 տ. տեղահանված կին**

«...Ես ավելի լավ ա մեռնեմ, քան թե սենց խաղաղության մեջ ապրեմ: Ամոթով ապրում եմ, բայես, ամոթով եմ ապրում, որ հող եմ տվել, տուն եմ տվել»: **51-75 տ. տեղահանված տղամարդ**

«...Դե ասենք էսքան ժամանակ պապան էլ ա պատերազմի մասնակից եղել, իր ընկերներն էլ են գողվել, չեմ կարող ես ինչ-որ ադրբեջանցու հետ շփում ունենամ»: **14-18 տ. տեղահանված տղա**

«Իրենք անընդհատ մեզ տանում են թուրքի հետ խաղաղության: Ախր թուրքը 30 տարի ատելություն ա իր երեխեքի մեջ մեր նկատմամբ սերմանել՝ 30 տարի, որ հայը մեր թշնամին ա, հային պիտի մորթենք, հային պիտի սպանենք: Դուք ո՞նց եք կարծում, ո՞նց պիտի թուրքի հետ ապրենք: Էս էլ առաջվա թուրքը չի, առաջվա հայը չի, հիմա լրիվ փոխվել են: Նրանք ամեն պահը օգտագործելու են մեզ սպանելու»: **36-50 տ. տեղահանված կին**

«Իրանք մեր դարավոր թշնամիներն են, դա մեր արյան մեջ ա, մեր գենետիկ կողի մեջ ա: 2 տարեկան երեխան արդեն գիտի թշնամի բառը: Իմ տատը, իմ գերդաստանը տեսել են պատերազմ ու տուժել են թուրքից: Ո՞նց կարանք հիմա մենք թուրքի հետ դիվանագիտական բանակցություններ անենք, հայտարարի գանք ու ապրենք»: **51-75 տ. տեղահանված կին**

«Ֆիզիկապես հնարավոր էր, որ հայերն ու ադրբեջանցիները ապրեին իրար հետ, բայց դա երկար չէր ձգվի, դա Նորից կհանգեցներ պատերազմի, եթե ոչ պետությունների միջև, ապա քաղաքացիական՝ կրոնների միջև պատերազմի»: **14-18 տ. տեղահանված աղջիկ**



«Ես մի անգամ խոսակցության ժամանակ ասեցի. էս մեկը հայերի հետ յուր չի գնում, էն մեկը չի գնում, կարո՞ղ ա հայերը չեն ոչ մեկի հետ յուր գնում: Ի՞նչ պետություն կամ ի՞նչ ազգապրի հայերի հետ, որ լավ ապրեն իրար հետ: Ընդհանուր որ նայենք, ոչ մի ազգի հետ էլ մենք չենք կարող լավ ապրել, որովհետև մենք միշտ մեզ բոլորից վեր ենք դասում: Մենք միշտ մեզ բարձր տեղից ենք նայում: Նույնիսկ հիմա»: **19-35 տ. տեղահանված տղամարդ**

«Եթե ռուսները քաշեն քթները էստեղից... Իրենք են խառնում: 2 հոգու կռվացնում են, իրենք էլ միջևորդի դերում միշտ էստեղ են: Պիտի ռուսների քիթը կոտրվի, որ էլ չիսկ չանեն՝ էս կողմ գան: Ու սրան պիտի դրսից օգնեն: Ոնց 90-ականներին Սովետը քանդվեց, հետո Ամերիկան սկսեց Ռուսաստանին փողեր տալ, որ կանխատեսելի լինի, բայց դրանք էլ ուտում են [փողը] ու նորից դառնում նույնը՝ չարիք աշխարհի համար: Հո Ադրբեջանի ժողովուրդը չի՞ ուզում անընդհատ կռվի մեջ լինի, էստեղ էլ տարբեր ազգություններ կան, որ դժգոհ են էս ամեն ինչից: Ամեն ինչը Ալիևի իշխանության համար ա, ժողովրդի շատ պետքն ա, մեծ երկիր ունեն, էս Ղարաբաղը ինչների՞ն ա պետք»: **51-75 տ. տեղահանված կին**



# ԱՄՓՈՓՈՒՄ

Քաղաքական և հասարակական կառուցվածքների նշանակալի փոխակերպումները և ճգնաժամերը ազդում են սոցիալական և քաղաքական ապագայի հանրային ընկալումների վրա: Այս առումով ապագան իրողություն է, և հնարավորություն: այն խզում է ներկայից, սակայն մեծապես կախված է դրանից և հատում է դրա սահմանները (Delanty, 2020): Հատկապես ժամանակակից աշխարհում ապագան մտածելը և այն երևակայելը սոցիալական աշխարհի կառուցման կարևորագույն ասպեկտներից է: Ապագան կարող է ըմբռնվել իբրև հնարավորությունների կամ անորոշությունների տեսածիր, խզում ներկայից կամ դրա շարունակականություն: Ապագայի պոյնտների ուսումնասիրությունը չի նշանակում, թե դրանք կիրագործվեն (Mische, 2009), սակայն կարևոր է հասկանալ, թե ինչպես են ապագայի պատկերացումները՝ հաճախ անորոշ, ազդում ներկայի սոցիալական և քաղաքական գործընթացների վրա: Միաժամանակ անհրաժեշտ է քննել և խորապես ըմբռնել այն ճգնաժամերը, սոցիալական անորոշությունները և քաղաքական ու հասարակական կառուցվածքների դինամիկ փոխակերպումները, որոնք ազդում են ապագայի հանրային պատկերացումների վրա:

Ինչպես սոցիալական, այնպես էլ քաղաքական ապագայի հայեցակարգն առանցքային դարձավ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հայաստանյան և ղարաբաղյան հասարակությունների ցնցումները հասկանալու համար: Պատերազմի ելքը սրեց քաղաքական ու սոցիալական անապահովության, անորոշ ապագայի փորձառությունը. «Անկանխատեսելիությունից խոսում էին բոլորը, բայց հատկապես Ղարաբաղում, նախկին սահմանամերձ տարածքներում ապրողները և տեղահանված անձինք նշում էին, որ ամեն օր շատ մեծ անհանգստություն են զգում»<sup>13</sup>:

**13.** Ստոխա, Լ. (2021). *Հավաքական հոգեբանական վերքեր. կոլեկտիվ տրավման և ղարաբաղյան հակամարտությունը*. Independent Peace Associates:

Սոցիալ-քաղաքական անորոշության և անվտանգության խար-  
խլման համատեքստում սրված և ռադիկալացած են հատկապես  
այն հանրային շերտերի դիրքորոշումները, որոնք ամենաչատն են  
ազդվել պատերազմից: Նրանց դիրքորոշումների վրա մեծապես  
ազդում են նաև պատերազմի բերած սոցիալ-տնտեսական անապա-  
հովությունը և աղքատությունը, որ պայմանավորում են հանրային-  
քաղաքական գործընթացներից մարդկանց օտարումը, ապագայի  
երկարաժամկետ պլաններ կազմելու դժվարությունները:

Ապագայի՝ իբրև հնարավորությունների հեռանկարի հանդեպ  
հոռետեսական մոտեցումների գերակայության համատեքստում  
ֆրագմենտացած են նաև խաղաղության, խաղաղ համակեցության,  
պատերազմի, տարածաշրջանային գործընթացների և տարա-  
ծաշրջանում իրերի դրության, ինչպես նաև սեփական իղձերի  
ձևակերպումները: «Խաղաղությունից լավ բան չկա»-ն և «անհրա-  
ժեշտ է պատերազմով հետ բերել կորցրած հողերը» հակադիր  
մտայնությունները հաճախ պատկանում են նույն մարդուն: Ապագայի  
հոռետեսական սցենարները մի կողմից հենված են պատերազմի  
փորձառության վրա, մյուս կողմից էլ սնված են հանրային սենտի-  
մենտները շահարկող ՋԼՄ-ներից և քաղաքական խմբերից: «Ասում  
են՝ պատերազմ է լինելու», «գրում են՝ Սյունիքը հանձնելու են»,  
«ադրբեջանցիները մտել են Երևան»։ այս սոցիալական վախերը էլ  
ավելի են սրում անվտանգության, ապագայի անորոշության զգա-  
ցումները:

Մշակութային տարբեր շերտերով պայմանավորված նման  
ֆրագմենտար ըմբռումները և դիրքորոշումները առկա են գրեթե  
բոլոր հարցազրույցներում՝ ցուցանելով այս բարդ հարցերի շուրջ  
մարդկանց խրթին և խառը պատկերացումները: Միաժամանակ  
կարող ենք նկատել այդ ֆրագմենտար ըմբռումների քաղաքա-  
կան պատճառները. հաճախ այդ երկու հակադիր դիսկուրսները  
սնուցվում են իշխանություն ունեցող սուբյեկտների կողմից և, պայ-  
մանավորված քաղաքական շահով ու նպատակահարմարությամբ,  
կիրառվում են ըստ անհրաժեշտության:

Հանուն խաղաղության զինվելու դիրքորոշումներն ազդված են տարիներ ի վեր տիրապետող «ուզում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի» քաղաքական մտածողությունից և հռետորաբանությունից, որ հազվադեպ է հարցադրվել և քննադատվել: «Ուզում ես խաղաղություն, պատրաստվիր խաղաղության» մտածումն այդպես էլ տեղ չի գտել հայաստանյան հանրային-քաղաքական, ակադեմիական, հասարակագիտական և հումանիտար մտքի շրջանակում:

Խաղաղության աղոտ պատկերացումները հեռավոր ապագայի տիրույթում են: Տիրապետող դիրքորոշում է այն, որ սերունդների փոփոխության արդյունքում միայն հնարավոր կլինի տարածաշրջանում խաղաղ համակեցությունը: Խաղաղության պայմանագրի անհրաժեշտության շուրջ դատողությունները թեև շատ հազվադեպ, բայց նշմարվում են հետազոտության շրջանակում:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1| Բուրդիո, Պ. (2019). *Հասարակական կարծիք գոյություն չունի* (ֆրանսերենից թարգմանությունը՝ Նազենի Ղարիբյանի).  
Սոցիոսկոպ ՀԿ:
- 2| Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա. (խմբ.). (2021). *Հետահայաց ծայրեր պատերազմի և խաղաղության մասին*. Սոցիոսկոպ ՀԿ.  
Երևան:
- 3| Սուտիևա, Լ. (2021). *Հավաքական հոգեբանական վերքեր. կոլեկտիվ տրավման և դարաբաղյան հակամարտությունը*.  
Independent Peace Associates:
- 4| Bircan C., Bruck, T., Vothknecht, M. (2010). *Violent Conflict and Inequality*. Brooks World Poverty Institute.
- 5| Broers, L. (2019). *Armenia and Azerbaijan: Anatomy of Rivalry*.  
Edinburgh University Press.
- 6| Delanty, G. (2020). Imagining the future: Social struggles, the post-national domain and major contemporary social transformations. *Journal of Sociology*, Vol. 57, No 1.
- 7| Goodhand, J. (2001). *Violent Conflict, Poverty and Chronic Poverty*.  
Chronic Poverty Research Centre.
- 8| Mische, A. (2009). *Projects and Possibilities: Researching Futures in Action*. *Sociological Forum*, Vol. 24, No. 3.

